

374
7-98

1940

2 - MAR 2010

ԱՅԱԿԱՆ ԻՎԶ ԼՈՒԺԱՂՈՍ

ԵՐԱԴՐԵՐ

ՄԵԽԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՐԳ ԴՊԲՑԻ

ԲՈՒՍԵԲՆԱԻԹՅՈՒՆ
ԿԵՆԴՐԱԾԲՆԱԻԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ

ԶԵԿ

ՓԻԶԻԹՈԼԱԳԻՑ



374

Ծ-98

ԼՈՒԺԱՂՈՍ

ԲԵԳԱՆ

19 40

16 MAY 2019

8-98

Տ. 216

Պատ. իմբագիր՝ Մ. Հայկաղունի
Տեկ. իմբագիր՝ Յ. Զախարյան
Սբբազը Վ. Պողոսյան
Կռնություն արբագրիչ՝ Մ. Պարոնիկյան
Հանձնված և արտադրության 1940 թ. հունիսի 15-ին
Առարագքած և տպագրության 1940 թ. սպառուսի 2-ին
Գլանվիթություն՝ Մ-441, հրատ. № 47, պատվեր № 157, տիրած 600
հոկտեմբերի տպարան, Եկրաման, Տերյան № 157



15328-58

268
40

Հաստատված և ՌԽՖՍՀ
Լուսմողկոմատի կողմէց

ԲՈՒՄԱԲԵՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ 1)

Սույն ծրագիրը կազմված և նախորդ ծրագրերը գպրոցի պրակտիկայում ստուգելու հիման վրա Ծրագրի հիմնական խընդիրն է՝ փորչել բուսաբանության տարրական գասընթացի ուղղությունը, սիստեմը, բովանդակությունն ու գիտելիքների ծավալը մեծահասակների միջնակարգ գպրոցում, հաշվի առնելով նրա սպեցիֆիկ առանձնահատկությունները և աշխատանքի կոնկրետ պայմանները:

Բուսաբանության դասավանդման հիմնական խնդիրները մեծահասակների միջնակարգ գպրոցներում հետեւյալներն են՝

- 1) տալ աշակերտներին փաստերի և որինաչափությունների տարրական սիստեմավորված գիտելիքներ բույսի կազմության և կյանքի, բուսական աշխարհի բազմակերպության և զարգացման մասին.
- 2) բուսական որդանիզմի և բուսական աշխարհի զարգացման մասին աշակերտների ունեցած կոնկրետ գիտելիքների հիման վրա, ձեռվորեք նրանց պարագաներության մակարդակին համապատասխան, բնության դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը, վորը թշնամի յե կրօնին և նրա հետ կապված ամեն տեսակի հայացքներին.
- 3) կոնկրետ որինակներով աշակերտներին ցույց տալ, թե ինչպիս բուսաբանական գիտության նվաճումները կիրառվում են ոոցիալիստական գյուղատնտեսության պրակտիկայում, ծառայում մեր յերկրի հարստությունն ու հզորությունը ավելացնելու գործին:

Առանձնապես անհրաժեշտ և շեշտել խորհրդացին գիտնականներ՝ Ի. Վ. Միջուրինի և Տ. Դ. Լիսենկոյի շկոլայի նվա-

1) Ծրագիրն ու իր բացարագիրը կազմել է Վ. Ա. Տետյուբեկը

ճութերը, մի շնորհած, վորը սերտ կերպով կապված է կոլտնտեսականների լայն մասսաների հետ և վեր և ածում բույսի վերաբերյալ գիտությունը բույսը կառավարելու գիտության

Ծրագրի առաջին հատվածում տրվում են աեղեկություններ բույսերի մորֆոլոգիայից, անատոմիայից և ֆիզիոլոգիայից։ Այդ հատվածը կառուցվում է ֆիզիոլոգիայի հիման վրա, հատվածի թեմատիկան ֆիզիոլոգիական է։ Բույսն ուսումնասիրվում և վոչ թե լսու որգանների, այլ լսու ֆունկցիաների, և բույսի ֆունկցիաներն ուսումնասիրելու կապակցությամբ ողափորձվում են անհրաժեշտ տեղեկություններ մորֆոլոգիայից և անատոմիայից։ Ծրագրի այսպիսի կառուցվումը հիմնավորվում է թե սկզբունքային և թե գործնական բնույթի նկատառությունվ։

Դեռևս Տիմիրյազեին ասում եր՝ «Դժվար թե տարակուսանքի յենթարկվել այն, վոր ֆիզիոլոգիան ավելի իրավունք ունի ընդհանուր ուշագրության, քան մորֆոլոգիան, յերեսույթն ավելի, քան մարմինը, կյանքն ավելի, քան ձեզ» («Բույսի կյանքը», էջ 69, ուսուական հարատարակություն)։ Մեծահասակների դպրոցների պրակտիկան լիովին հաստատում է այս գորույթը։ Աշակերտների ուշագրությունը մեծապես զրավում են ֆիզիոլոգիական բնույթի տեղեկությունները։ Այս հանդամանքը ստիպում է դիմել ծրագրի անառականական համարական համարական գործությունների առաջականացնելու գործությունների գործականությունը։

Ծրագրի յերկրորդ հատվածը պարունակում է բույսերի սիստեմատիկայի հիմունքներ՝ ֆիլոգենիայի անհրաժեշտ աեղեկություններով։ Հիմնականը, վոր պահանջվում է բույսերի վորեն խմբի այս կամ այն ներկայացուցչի ուսումնասիրության ժամանակ, այդ նրա մորֆոլոգուանատոմիական ու բիոլոգիական բնութագրումը տալն եւ այդ որինակով տվյալ խմբի ծագման վրա լույս սփռող ֆիլոգենետիկ կապերի ցուցագրումը։

Առաջին խնդիրը, վոր ծառացած է դասադուների առաջամին մի թեմա, ամեն մի հատված անցնելիս—այն եւ, տալ աշակերտներին փաստերի գետելիքներ, իսկ այնուհետեւ այդ փաստերը գիտենալու հիման վրա բաց անել համապատասխան որինաչափությունները։

Դասադուն պետք է նոգ տանի, վորպեսզի աշակերտներն լսու հնարագրության կարողանան անմիջականորեն դիսեւ այդ փաստերն ու յերեսույթները։ Դասադույթի կենդանի խոսքին դուզընթաց, հարկավոր է լայնորեն կիրառել առարկայականու-

թյուն ու դիտողականություն, դիտումներ ու փորձեր աղյուսականեր ու նկարներ, ցուցադրական ու բաշխիչն նյութեր։

Այս ծրագրում տրվում է բուսաբանության դասավանդման համար անհրաժեշտ և յուրաքանչյուր դպրոցի համար մատչելի փորձերի ու դիտումների ցանկ։ միաժամանակ մատնանշվում են լրացուցիչ փորձեր, վորոնց կատարումը ցանկալի յեւ։ Անհրաժեշտ և կատարել փորձերի ու դիտումների այդ մինիմումը, անցկացնելով այդ փորձերը դասարանում և հանձնարարելով աշակերտներին տանը կատարելու

Բույսի կյանքի և բուսական աշխարհի որինաչափությունների իմացումը պետք է ձևավորի աշակերտության, նրանց զարդացման մակարդակին մատչելի, բնությունը դիալեկտիկականմատերիալիստական ըմբռնումը։ Այս տեսակետից աշակերտների մեջ յիշեռույթի նյութական պատճառներին համելու սովորույթի գաստիարակումը հզոր միջոց և հանդիսանում։ Աշակերտների մեջ կաղուալ պատճառական մտածողության դաստիարակության նշանակությունը ամենայն պարզորդությամբ ցույց է տրված։ Կ. Կրուպսկայի մանկավարժական աշխատություններում։

Այդ տեսակի աշխատանքի համար առանձին հետաքրքրություն և միաժամանակ դժվարություն են ներկայացնում ծրագրի այն տեղերը, վորտեղ խոսվում է բույսերի այս կամ այն հարմարանքը բացատրելու մասին (որինակ քամու և միջատների միջոցով փոշոտվող ծաղկեկների կառուցվածքի առանձնահատկությունների բացատրությունը և այլն)։ Այսուղ պետք է տալ պատճական մտածերիալիստական բացատրություն դարձինիզմի դիրքերից ինարկե, բուսաբանության տարրական զասընթացում մենք չենք կարող Դարվինի ուսմունքը շարադրել բայց այդ ուսմունքի հատվածները (ֆրագմենտները) մենք պարտավոր ենք տալ Մասնավորապես աշակերտները պետք և պատկերացում ստանան տեղի, լույսի և այլնի համար բույսերի մեջև տեղի ունեցող պայքարի մասին, առավել հարմարվածների գերազանցությունը և չարմարեցվածների սերատվելու մասին, բույսերի հարմարվածության մասին (վորպես բնական ընտրության արդյունք)։

Պետք է ծանոթացնել աշակերտությանը Կ. Ա. Տիմիրյազեվի—մեր հայրենի ֆիզիոլոգիայի հիմնագրի ու դարվինիզմի համար անհաջող մարտնչողի, ինչպես և դարվինիզմի գործի արդի շարունակողներ Ի. Վ. Միչուրինի, Տ. Դ. Լիսենկոյի և մյուսների կյանքի ու գործունելյության հետ։

Բուսաբանության դասավանդման մեջ մեծահասակների զպրոցներում բացառիկ կարեվոր նշանակություն ունի տեսական ռևուզման կապը պրակտիկայի, գլխավորապես դյուղատնտեսության պրակտիկայի հետ ինչպես ցույց ե տալիս մեծահասակների զպրոցի փորձը, բուսաբանության դասավանդումը պլրակտիկայից անջատ, աշակերտների մեջ հետաքրություն չի առաջացնում. դեռ ավելին, նրանք նույնիսկ կասկածի տակ են զնում այդպիսի տուրկայի նշանակությունն իրենց համար. Առաջարկվող ժրադիրը բավարպով արտացորւմ ե այդ կապը պրակտիկայի հետ Ծրագրի մեջ նշվում են մեր առաջավոր ապրությունաբանական դիտության ներկայացուցիչների աշխատանքները, ի. վ. Միջուրինի ու Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքները, վորոնք վոչ միայն հարստացրին գիտությունը, այլև մեր յերկրի գյուղատնտեսությունը հայց բուսաբանության դասավանդման ժամանակ գիտնականների ձեռք բերած նվաճումներին զուգընթաց, աշակերտներին պետք ե ցույց տալ նույն պլրակտիկայի առաջավոր մարդկանց, գործի նովատորների, հողագործության ստանունվականների, փորձարար կոլտնտեսականների նվաճումները Մեծահասակների զպրոցում այս բանը առանձնապես մեծ դասախարակչական նշանակություն ունի. Այս ահսակեաից շատ կարենոր ե, վորպեսզի զյուղական զպրոցը կազմ համատափ դյուղի գիտական կենտրոնի, խրճիթ-լաբորատորիայի հետ, ծանոթ լինի նրա թեժատիկային ու աշխատանքի արդյունքներին և այնու Գյուղական զպրոցի բուսաբանության դասատուցին հանձնարարվում է տառանձնապես ուշադիր կերպով վերտերվել գեղի այն աշակերտները, վորոնք առանձին հետաքրությունը ու նրա փորձնական աշխատանքները: Այդպիսի ժարդկանց պետք ե կապի խրճիթ-լաբորատորիաների, մոտակա փորձակայանի հետ, նրանց պետք ե հանձնարարել և ոգնել համապատասխան զրականություն ձեռք բերելու, որինտեղ՝ “Կօլխօզու օպերատություն” ժուրնալը և այնու Ուսումնական ժամանակի սղության պատճառով ծրագրի մեջ պարտագիր եքսկուրսիաները չեն նշվում. կարելի յե միայն հանձնարարել ուսման ժամերից զուրս եքսկուրսիաները. Առավելապես հանձնարարվում ե աշակերտների հետ եքսկուրսիա կտարարել գեղի բնությունն իրինակ. աշնանը, պարագմունքներից տուաչ, կամ գարնանը, պարագմունքներից հետո զեպի անտառու Աշնան եքսկուրսիան կլինի նախնական եքսկուրսիայի

խնդրին և հարստացնել աշակերտությանը վորոշ դիտողություններով, հետագա պարագմունքների համար նյութեր հավաքել, որինակ. առանցքային փնջարմատավոր բույսեր, լոբազգիների արմատներ իրենց պալարիկներով փաթաթվող, գետնատարած և այլ ցողուններ ունեցող բույսեր, զանազան քարաքոսեր, մամուռներ, ձարիստեր և այլն:

Գարնանը յեզրափակիչ բնույթի եքսկուրսիան ծառայում ե անցած դասընթացը կրկնելու համար. Աշակերտները դասերի ժամանակ ստացած զիտելիքները կամրացնեն տարբեր արմատներ, ցողուններ, տերելիներ և այլն ունեցող բույսերի վրա:

Վերին աստիճանի հետաքրքրական ու ոգտակար, մանավանդ գյուղական զպրոցի համար, կարող ե լինել հկուկուրսիան դիպի բուսաբանության և բուսաբուծության բնագավառում աշխատող վորոնք գիտահետազոտական հիմնարկը. Այսպիսի եքսկուրսիան և ուսուցչին և աշակերտներին կհարստացնել վորոշ մասնագիտական հարցերի վերաբերյալ խորացրած գիտելիքներով:

Ծրագրին կցված ե բուսաբանության ու բուսաբուծության տարբեր հատվածներին վերաբերող զրքերի մի ընդարձակ ցուցակ, վորոնք կարող են սգտակար լինել դասավանդման գիտական մակարդակը բարձրացնելու մեջ և վորոնցից շատերը պետք ե վոր ունենա դասատուն իր սեփական զրագարանում: Ծրագրին կցվում ե բուսաբանության գիտական ժուրնալների ցուցակը: Սիստեմատիկորեն ծանոթանալով այդ ժուրնալներին, դասատուն ժանոթ կլինի գիտության վերջին նվաճումներին:

Ծ Ր Ա Գ Ի Ռ

(Հաօվի յե առնված 65 ժամի համար)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Բուսաբանությունը վորպես գիտություն բույսերի մասին, բուսաբանության գլխավոր բաժինները: Բուսաբանության նշանակությունը բնույթյունը հեշտ մատերիալիստորեն հառկանալու և սոցիալիստական տնտեսության պրակտիկայի համար. Առաջավոր բուսաբանական գիտության խնդիրները ԽՍՀՄ-ում, բուսաբուծության և բուսաբուծության բնագավառով գիտական կենտրոնները և գեղավար գիտական գործիչները: Կոլխոզային փորձագիտության նշանակությունը Ստախանովյան շարժումը յերկրագործության մեջ: Համ (թ) Կ 18-րդ համագումարի կողմից գրված խնդիրը գյուղատնտեսության բնագավառում յերբորդ հնգամյակում:

I. ԲՈՒՅՍԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ (38 ԺԱՄ)

1. ԲՈՒՅՍՈՒ ՎՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ՈՐԳԱՆԻՉՅՄ (3 Ժամ)

Ծաղկավոր կամ սերմատու բույսերը վորպես բույսերի առնարադաթիվ և ամենատարածված խումբը յերկրագնդի վրա։ Ծաղկավոր կամ սերմատու բույսի տիպիկ կազմությունը։ Նրա որգանները՝ արմատը, տերեվը, ցողունը, ծաղիկը, նախական հասկացողություն յուրաքանչյուր որգանի նշանակության մասին բույսի կյանքում։

Բույսի ներքին բջջային կազմությունը՝ բջջի կազմությունը—թաղանթ, պրոտոպլազմա, կրիզ, վակուոնիր, բջջահյութ։ Բջջների բազմացումը։ Հասկացողություն բուսական հյուսվածքների մասին։

Բույսի, վորպես կենդանի որգանիզմի առանձնահատկությունները։

Դիտողություններ. 1) Զանազան կուլտուրական և վայրի բույսերի (ընդեղնների, հացազգիների, շրթնածաղկավորների և այլն) կազմության դիտումը։ 2) Հասարակ աչքով գիտել հասած ձևերուկի, պամիդորի միջուկի բջջները։ 3) Սոխի թաղանթի դիտումը միկրոսկոպի տակ։

2. ՍԵՐՄԸ ՑԵՎ ՆԲԱ ԾԼՈՒՄԸ (5 ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմությունը։ սաղմի մասերը։ Սերմերի բաղադրությունը։ ջուր, հանքային և որգանական նյութեր (սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր)։ Սերմի ծերու համար անհրաժեշտ պայմանները—խոնավություն, ող, համալատասխան ջերմություն։

Սերմերի ծլումը ղաշտում, կապված ծածկելու, խորության, յեղանակի պայմանների և այլնի հետ։ Ծիլերի զարգացումը։ Սերմերի ծլում պրոցեսի նյութականությունը։ Ծիլ սնումն ի հաջիվ սերմի պահեստային որգանական նյութերի։

Սերմի նախապատրաստումը ցանելու համար, ծլունակության վորոշումը, մաքրումը, սորտավորումը, ախտանառումը։ Այդ միջոցառումների նշանակությունը բերքատվության բարձրացման գործում։ Սորտավոր սերմերի նշանակությունը ԽՍՀՄ գյուղատնտեսության մեջ։ Սերմերի ցանելու հետ կապված կրոնական նախապատրումների անհեթերությունն ու վնասը։

Փորձեր և դիտողություններ. 1) Ցորենի և սիսկուսի

կազմության զիտումը։ 2) Ռուբայի և սոսնձանյութի հայտնաբերումը ալյուրի մեջ, յոդի սեակցիան ուղայի վերաբերյալ։ 3) Դիտողություններ տարբեր տեսակի բույսերի սերմերի ծերու վրա։ 4) Սերմերի ծլումը տարբեր պայմաններում։ 5) Բույսի աճեցումը խոշոր և մանր սերմերից։ 6) Անող սերմերի մեջ յեղան ուղայի վերածումը շաքարի (համարես անել)։ 7) Սերմերի ծլունակության վրայումը։

3. ԲՈՒՅՍԵՐԻ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻՑ (6 ժամ)

Հողի կազմությունը՝ բուսահող, հանքային աղեր, ավազ, կավի չողը վորպես ջրի և լուծված աղերի աղբյուր բույսերի համար։ Արմատի զարգացումը սերմի սաղմային արմատիկից։ Արմատի տիպերը. փնջաձև և առանցքաձև արմատներ։ Հավելյալ արմատներ։ Արմատի արտաքին կազմությունը—աճող մաս, ծծող մաս և փոխաղորդ մաս։ Արմատի ներքին կազմությունը։ Ջրի և նրա մեջ լուծված հանքային աղերի ներծծումն արմատների միջոցով։ Բույսերի սննդառության համար անհրաժեշտ նյութերը։ Գաղափար և սննդառության մակարդակից մասին։

Լորազգի բույսերի սննդառության առանձնահատկությունները և նրանց նշանակությունը գյուղատնտեսության մեջ։ Կանաչ պարարտացում։

Ցանքաշրջանառության նշանակությունը։ Պարարտացում և նրա նշանակությունը բերքի բարձրացման գործում։ Բույսերի լացուցիչ սննդառումը վորպես հողագործության ստախանովականների ֆումից առաջադրված պարարտացման նոր մեթոդ։

Հողի մշակումը և այդ միջոցառումների նշանակությունը յերաշտի գեմ պայքարելու գործում։ Խորը վարելու նշանակությունը մոլախոտերի գեմ պայքարելու խնդրում։ Վոռոգում և ջրում։ Զավոլժյեյի վոռոգման պրոբլեմը։ Ցերաշտի գեմ տարած հաղթանակների հակակրոնական նշանակությունը։

Փորձեր և դիտողություններ. 1) Հողի կազմության ուսումնասիրությունը—հողի շիկացումը, աղերի անշատումը, ավազի և կավի զատումը։ 2) Դիտել ցորենի, սիսկե և կորեկի արմատների զարգացումը։ 3) Տարբեր տիպի արմատների դիտումը։ 4) Հավելյալ արմատների ցուցադրումը։ 5) Արմատի աճման գոնայի վորոշումը։ 6) Դիտել արմատների մազիկների առաջացումը։ 7) Արմատի կեղեկի և կենարոնական գլանի դիտումը։ 8) Դիտողություններ՝ ջրի սերծմանը բույսի կողմից (անոթի մեջ)։ 9) Լորազգիների արմատների վրայի պալարիկների ցուցադրումը։ 10) Զանազան հանքային պալարատանյութերի ցուցադրումը։

4. ԲՈՒՅՍԻ ՄՆԵԴԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՂԻՑ (6 Ժամ)

Ողի բաղադրությունը—ազոտ, թթվածին, ածխաթթու գազ, նրանց հատկությունները:

Տերեվի արտաքին կազմությունը—տերեփային թիթեղ, կոռուսն, ջղեր, Պարզ և բարդ տերեներ, Տերեների դասավորությունը: Տերեների ներքին կազմությունը—մաշկ սյունաձև և սպունգաձև հյուսվածքներ, փոխադրող հյուսվածք:

Հերձանցքները և նրանց նշանակությունը՝ Քլորոֆիլային հատիկները և քլորոֆիլը:

Ածխաթթու գազի կլանումը և թթվածնի առանձնացումը կանաչ բույսի կորմից լույսի տակ: Որգանական նյութի (ոսլա, շաքար) առաջացումը կանաչ բույսի մեջ լույսի տակ: Կանաչ գույնը և արել: Պայքար լույսի համար բույսերի մեջ: Մարդու միջամտությունն այդ պայքարում բույսերի մշակման ժամանակ: Ողի պարարտացումը ածխաթթու գազով:

Կանաչ բույսերի նշանակությունը բնության մեջ: Կանաչ բույսերը, վորովիս որգանական նյութ առաջացնող և կուտակող Սապրոֆիտ և պարագիտ բույսերի սննդառությունը: Միջամտակեր բույսերի սննդառության առանձնահատկությունները: Կենդանիների կախումը բույսերից:

Կանաչ բույսերի նշանակությունը ժողովրդական տնտեսաթյան մեջ: Պայքար ստալինյան բերքի համար, Մեր զաշտերի ստախանովականների նվաճումները: Առաջավոր գիտության և տեխնիկայի նշանակությունը, բերքի, մեր յերկը հարստությունը ավելացնելու համար մղվող պայքարում: Կրօնը վորապես արգելակ բերքատվության համար մղվող պայքարում:

Տիմիրյազեվը վորպես բույսերի ֆիզիոգիայի հիմնադիր մեր յերկը: Նրա կյանքը, գիտական և հասարակական գործունեյությունը:

Փորձեր և դիտողություններ.— 1) Ֆոսֆորի այրումը անոթի տակ ջրի վրա: 2) Ածխաթթու գազի և թթվածնի ստացումն ու հատկությունների փորձարկումը: 3) Տերեների հավաքածոների դիտումը: 4) Տերեների լայնակի կորպածքի ուսումնասիրությունը միկրոսկոպի տակ: 5) Ածխաթթու գազի կլանումը և թթվածնի արտադրումը ցուցադրող փորձեր. ցամաքային և ջրային բույսերի վրա: 6) Լույսի տակ կանաչ տերեների մեջ, ուլայի առաջացումը ցուցադրող փորձ:

5. ԲՈՒՅՍԻ ՃՆՉԱՌՈՒԹՅՈՒՆՆ (2 Ժամ)

Ճնչառության հատուկ որգանների բացակայությունը բույսերի մեջ բույսի արբանական կորմից շնչառության պրացիսում կատարվող թթվածնի կլանումը և ածխաթթու գազի արտադրատումը: Նյութի ծախսումը բույսերի շնչառության ժամանակ: Բույսերի շնչառության պրոցեսում ջերմության արտադրումը: այս հանքամանքի հաշվառումը: սերմերի պահպանելու պրակտիկայում և այլն:

Ճնչառության և սննդառության պրոցեսների հակադրությունն և միանությունը:

Փորձեր և դիտողություններ.— 1) Թթվածնի կլանման և ածխաթթու գազի անջատման փորձերի ցուցադրումը, աճող սերմերի, տերեների, արմատների և այլնի շնչառության պրոցեսում: 2) Համեմատական փորձեր մարդու շնչառության պրոցեսում թթվածնի կլանման և ածխաթթու գազի արտադրման հետ:

6. ՆՑՈՒԹԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺՈՒՄԸ ԲՈՒՅՍԻ ՄԵՋ (5 Ժամ)

Հասկացողություն ընձյուղի մասին: Բողբոջի կազմությունը յեզ ընձյուղի զարգացումը նրանից: Ցողունի բազմակերպությունը՝ ուղղահայց, վաթաթվող, սողացող և այլ ցողուններ:

Լույսի քշության կամ ազոտի շատության կապակցությամբ տեղի ունեցող ցանքով պառկումը:

Միջաշաքիլ և յերկշաքիլ բույսի ցողունի ներքին կազմությունը՝ լիուտակերպ և ծառակերպ բույսի ցողունների կազմության յուրահատկությունը:

Զրի և նրա մեջ լուծված հանքային աղերի բարձրացումը բույսի մեջ:

Զրի գորբշիացումը տերեների միջոցով, հերձանցքների գերը այդ պրոցեսում: Արտաքին պայմանների ազեցությունը դոլորշիացման վրա: Հասկացողություն չոր քամիների և նրա գեմ պայքարելու միջոցների մասին:

Որգանական նյութերի տեղափոխումը բույսի մեջ: Որդանական նյութերի պաշարների կուտակումը բույսի մեջ և նրա նշանակությունը բույսի կյանքում:

Փորձեր և դիտողություններ.— 1) Բողբոջի կազմության դիտումը: 2) Դիաել ընձյուղի զարգացումը բողբոջից: 3) Տարբեր տեսակի ցողուններ ունեցող բույսերի ցուցադրումը: 4) Ցողունի

կտրվածքի ցուցադրումը միկրոսկոպի տակ: 5) Բույսի ցողունի միջով ներկված ջրի բարձրացման փորձերի գրվածքը: 6) Բույսի ճյուղերից կատարվող ջրի գուրգիտացման փորձի ցուցադրումը: 7) Վոլոշել հերձանցքների դրությունը տերերի վրա մի կաթել յիթեր կաթեցնելով: 8) Կեղեղի միջով որգանական նյութերի տեղափոխումը ուռենու կամ բարդենու ճյուղերի վրա: 9) Ցուցադրում վերաբաների, սալարների և այլ որգանների, վորոնք ծառայում է պաշարային որգանական նյութերի պահպանի:

7. ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱՂՄԱՑՈՒՄԸ (7 ժամ)

Ծաղկի կազմությունը, ծաղկակալ, առեղջներ և վարսանդի փոշոտում, ինքնափոշոտում և խաչածե փոշոտում, քամու և միջատների մասնակցումը փոշոտման մեջ Փոշոտող միջատների նշանակությունը կուլտուրական բույսերի բերքատվության բարձրացման գործում: Արհեստական խաչածե փոշոտման կերպումը յեղիպտացորենի և այլ կուլտուրաների բերքի բարձրացման համար:

Քամու և միջատների միջոցով փոշոտվող բույսերի ծաղկեների կազմության առանձնահատկությունները, այդ հարգարանքների պատմական բացատրությունը Բեղմնավորում և սերմերի ու պտղի գոյացում: Աերմերի և պտուղների տարածման տարբեր հարմարանքները: Սերմերը թափվելու յիշ պտղի ճաքճաքման պատճառով տեղի ունեցող կորուսաը բերքահավաքի ժամանակ և զրա կանխարկումը: Դաշտերը մոլախոսերով վարակվելու պատճառները: Մոլախոսերի պտղաբերությունը: պայքար նրանց դեմ:

Արհեստական փոշոտումը և տրամախաչում: Տրամախաչումը և ընարությունը սեծ սելիկցիներ Ի. Վ. Միջուրինի աշխատանքներում, զույգ ծնողների ընարության միջուրինյան մեթոդը: Ի. Վ. Միջուրինի նվաճումները պաշարին և հատապտղային կուլտուրաների նոր սորտեր ստանալու բնագավառում: Ի. Վ. Ծիցինի կողմից բազմամյա ցորեն ստանալը, սովորական թորենը չափերի հետ արամախաչելու միջոցով: Ա. Ի. Դելֆալինի կողմից աճեցրած կուլտուրական բույսերի բազմամյա սորտերը: Ներսուտային տրամախաչումը, ինքնափոշոտող բույսերի սորտերը բաշրելավերու նպատակով (Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքները): Խորհրդագային սելիկցիների աշխատանքների հակակոնական նըշանակությունը:

Բույսերի բազմացումը, ցողունի, արմատի յեղ այլն վեցե-

տատիկ որդոնների միջոցով: Բույսերի վեղետատիկ բաղմացման նշանակությունը գյուղատնտեսական պրակտիկայում:

Գաղափար պատվաստների մասին յեղ նբանց նշանակությունը այգեգործության մեջ: Պատվաստակալի յեղ պատվաստացույի փոխադարձ ազդեցությունը: Բույսերի բնություն վերափոխումը պատվաստների միջոցով: Վեցետատիկ հիբրիդների ստացումը (Ի. Վ. Միջուրինի և Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքները):

Փառակերպ և դիտուրյուններ. 1) Ծաղկի կազմության վերլուծումը: 2) Ծաղկափշուր ցուցադրումը միկրոսկոպի տակ: 3) Բույսի բազմացումը ցողունների և արմատների կարգածքների միջոցով: 4) Պատվաստների փորձեր:

8. ԲՈՒՅՍԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (4 ժամ)

Միաժյա, յերկամյա և բազմամյա բույսեր: Դարնանացան և աշխանացան բույսեր: Ցորենի զարգացման ֆազաները: Տ. Դ. Լիսենկոյի կամարի փորձերը, վորոնք լուծել են աշխանացանի չհասկավորման պատճառները, զարնան ցանքսի գեղեցում: Ակադեմիկ Լիսենկոյի բույսերի ստաղիական զարգացման թեորիայի հիմունքները: Պայմաններ, վորոնք անհրաժեշտ են բույսերը յարովիզացիայի ու լույսի ստաղիաներն անցնելու համար: Ցարովիզացիան վորպես ազրոտեխնիկական յեղանակ (միջոցառում) և նրա ժողովրդատնտեսական նշանակությունը (բերքի բարձրացում, կուլտուրայի առաջշարժում դեպի նոր սայոնները և այլն):

Ստաղիական զարգացման տեսության նշանակությունը սոցիալիստական գյուղատնտեսության գիտության և պրակտիկայի համար:

Փառակերպ և դիտուրյուններ.— 1) Փորձեր աշխանացան ցորենի յարովիզացման ասպարիզում: 2) Փորձեր բույսերի զարգացման լույսի ստաղիայի վերաբերյալ (ցորեն, կորեկ և այլն):

II. ԲՈՒՅՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (26 ԺԱՄ)

Ներածություն

Հասկացողություն բույսերի բազմակերպության և նրանց գաղափարագուն մասին:

I. Սպառաւուր ստորին բայխե

1. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ (3 ժամ)

Բակտերիաների տարածումը, մեծությունը՝ ձեվը, և կազմությունը Բակտերիաների սննդառությունը Բազմացումը:

Սպորագոյացումը: Բակտերիաների նշանակությունը բնության մեջ, անտեսության մեջ և մարդու կյանքում: Գիտության պայքարը վարակիչ հիվանդությունների մասին յեղած կրոնական նախապաշտումների դեմ: Բակտերիաների հնագարայնությունը:

2. ԶՐԻՄՈՒԹՅՈՒՆԵՐ (3 ժամ)

Զրիմուների բազմակերպությունը (միաբջիջ և բազմաբջիջ, կամուշ, զորշ, կարմիր և այլն) և նրանց տարածումը Խլամիդոմոնադան վորպես միաբջիջ կանաչ ջրիմուների ներկայացուցիչ, նրա կազմությունը, կենսաձևը, բազմացումը: Սպիրոֆիրան վորպես բազմաբջիջ կանաչ ջրիմուների ներկայացուցիչ, նրա կազմությունը, կենսաձևը ու բազմացումը: Ծովային զորշ և կարմիր ջրիմուները և նրանց նշանակությունը անտեսության մեջ: Հնագարյան ջրիմուները վորպես յերակիտային ձեեր, վորոնցից առաջացել են այլ խմբերի շատ բույսեր:

Դիտողություններ. 1) Խլամիդոմոնադայի ցուցադրումը միկրոսկոպի տակ. 2) Սպիրոֆիրայի ցուցադրումը:

3. ՍՈՒՆԿԵՐ (4 ժամ)

Հասկացողություն սունկերի բազմակերպության մասին: Մուկորը վորպես սոորին սունկերի ներկայացուցիչ, նրա կազմությունը, կենսաձևը և բազմացումը: Ստորին սունկերի մերձավորությունը ջրիմուներին (սապրոիդնիայի որինակի վրա):

Բարձրակարգ սունկեր. բազմիգիալ (շամպինյոն, սպիտակ սունկ) և պարկավոր (սաորչոնկ), նրանց կազմության առանձնահատկությունները, սպորատվությունը:

Սունկերի նշանակությունը անտեսության մեջ: Հասկացողություն կուլառւրական բույսերի պարագիտ-սունկերի մասին (զիսանոցավոր սունկեր, կարտոֆիլի սունկ և այլն) և նրանց դեմ պայքարի միջոցները: Ուտելի և թունավոր սունկեր: Գուղափար սունկերի ծագման մասին:

Դիտողություններ. 1) Մուկորի և սապրոիդնիայի աճեցումը: 2) Զանազան պարագիտ սունկերով վարակված բույսերի ցուցադրումը:

4. ՔԱՐԱՔՈՒՄՆԵՐ (1 ժամ)

Քարաքումների բազմակերպությունն ու տարածումը: Քարաքում վորպես բաղադրական որգանիզմ. ջրիմուռի և սունկի փոխարաբերությունները քարաքոսի մեջ: Քարաքումների բազմացումը: Քարաքումների նշանակությունը բնության և տնտեսության մեջ:

Դիտողություններ. — Զանազան ձևերի քարաքումների ցուցադրում (տերևանման, թփանման և այլն):

II. Բարձրակարգ սպորատու բայխե

5. ՄԱՄՈՒԼՈՒՆԵՐ (2 ժամ)

Մամուների բազմակերպությունն ու տարածումը կկվի վուշը վորպես տերևացողունավոր մամուների ներկայացուցիչ նրա կազմությունը և զարգացումը սպորից մինչև սպոր: Սփազընում (տորֆամատման), նրա կազմության առանձնահատկությունը, նրա նշանակությունը տորֆի գոյացման մեջ: Տերևացողունավոր մամուների ավելի բարձր կազմությունը, համեմատած շերտավոր բույսերի հետ: Մամուների առաջացումը:

Դիտողություններ. — 1) Կկվի վուշի և սփազնումի (տորֆամատման) կազմության գիտումը; 2) Մամուների սպորների աճեցումը:

6. ԶԱՐԽՈՑԱՆՄԱՆԵՐ (2 ժամ)

Զարխոտը, նրա կազմությունը, զարգացումը սպորից մինչև սպորի ջրաձիթների և գետնամուշների առանձնահատկությունները, հնագարյան ձարխոտանմանների նշանակությունը քարածխի գոյացման մեջ:

Բույսերի բրածո մեացորդները, վորոնք վկայում են բուսական աշխարհի հնության մասին և խորտակում աստվածաշնչի առասպելը յերկրի միայն 7000-ամյա գոյության մասին:

III. Սերմագոր (ծաղկավոր) բաւյսեր

7. ՄԵՐԿԱՍՏԵՐՄԵՐ (2 ժամ)

Սովորական սոճին վորպես մերկասերմերի ներկայացուցիչ։ Սոճու արտաքին կերպարը կախված բնակելիության պայմաններից, Բազմացման արական և իգական որգանների կազմությունը։ Փոշոտամ, բեզմնավորում և սերմերի գոյացում։ Փշատերեների նշանակությունը ժողանահասության մեջ։ Մերկասերմերի բնորոշությունները։ Սագովնիկներ, նրանց և ձարմատանմանների մերձավորությունը։ Մերկասերմերի ծագումը։

Դրառդություններ։ — Սոճու արական և իգական կոծոծների զարգացման տարրեր աստիճանների գիտումը։

8. ԾԱԾԿԱՍՏԵՐՄԵՐ (8 ժամ)

Ժամանակակից ծածկասերմերը վորպես բուսերի օիրող խումբ, նրանց բնորոշ առանձնահատկությունները։ Յերկշիրլավորների մի քանի կարեռագույն ընտանիքներ։ Էրանունկների, իտչածաղիկների, վարդածաղիկների, լրագործների, մորմազգիների, բարդածաղիկների։ միաշաքիլավորների՝ շուշանազգիներ, հասկաբույսեր։ Նրանց մորֆոլոգորիոգիական առանձնահատկությունները, նշանակություննը տնտեսության մեջ։

Ծածկասերմերը (վարսանդավորները) իբրև բուսական բարձրագույն խումբ։

Դիտողություններ։ — Վերեւում թվարկած ընտանիքների տիպիկ ներկայացուցիչների կազմությունը, հատկապի նրանց ծաղիկների ու սերմերի գիտումը։

ՑԵԶՐԱՓԱԿՈՒՄ (1 ժամ)

Բուստկան աշխարհի զարգացումը, Բուսական աշխարհի անփոփոխության մասին յեղած կրոնական պատկերացումների հակագիտականությունն ու վասակարությունը։ Նոր ձեփ բույսերի ստեղծումը մարզու կողմից։

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Л. И. Курсанов и М. И. Голенкин—Курс ботаники. Учпедгиз, Москва, 1938 год.
2. Б. А. Келлер—Ботаника, Сельхозгиз. 1935 год.

- 2589
2589-12
15322-12
3. Н. А. Максимов—Краткий курс физиологии растений, Сельхозгиз, 1938 год.
 4. К. А. Тимирязев—Дарвинизм и селекция, Сельхозгиз, 1938 год.
 5. К. А. Тимирязев—Жизнь растений, Сельхозгиз, 1936 год.
 6. К. А. Тимирязев—Физиология растений и земледелие.
 7. Ենկելս—Բնության դիմեկտիկա.
 8. И. П. Бородин—Курс анатомии растений, Сельхозгиз, 1938 гда.
 9. Ф. Н. Крашенинников—Лекции по анатомии растений, Биомедгиз, 1937 год.
 10. Л. А. Иванов—Систематика растений.
 11. В. Л. Комаров—Типы растений, 1935 года.
 12. " " " Происхождение растений.
 13. " " " Происхождение культурных растений, 1938 год.
 14. Г. И. Поплавская—Краткий курс экологии растений, Биомедгиз, 1937 год.
 15. И. В. Мичурин—Итоги шестидесятилетних работ.
 16. Т. Д. Лысенко—Теоретические основы яровизации, Сельхозгиз.
 17. Т. Д. Лысенко—Переделка природы растений, Сельхозгиз 1937 года.
 18. Т. Д. Лысенко—Яровизация с. х. растений, Сельхозгиз.
 19. Д. А. Долгушин—Мировая коллекция пшениц на фоне яровизации, Сельхозгиз, 1935 год.
 20. Д. А. Долгушин—Внутрисортовое скрещивание, Сельхозгиз, 1937 год.
 21. Н. В. Цицин—Что дает скрещивание пшеницы с пыреем, Сельхозгиз, 1937 год.
 22. А. И. Державин—Многолетние сорта сельскохозяйственных растений—Сельхозгиз, 1937 года.
 23. С. П. Лебедева—Переделка природы растений путем трансплантации, Сельхозгиз, 1937 год.
 24. „Яровизация”—Журнал по биологии развития растений, Одесса.
 25. „Ботанический журнал СССР”, изд. Академии наук СССР.



26. „Советская ботаника“ Изд. Академии наук СССР.
 27. „Социалистическое растениеводство“, Изд. Академии с. х. наук. им. В. И. Ленина.
 28. „Колхозное опытничество“—Журнал, публикующий научные работы колхозников-опытников.
 29. П. Маевский—Флора средней полосы СССР.—Определитель растений.
 30. В. А. Тетюрев, Методика эксперимента по физиологии растений, Учпедгиз, 1938 год.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ¹⁾

Բացարազիր

Մեծանասակների միջնակարգ գպրոցում կենդանաբանության դասընթացի տուած դրվում են հետևյալ հիմնական խնդիրները:

1. Աշակերտներին զինել կենդանաբանության գիտության հիմունքներով, այսինքն կոնկրետ փաստական նյութի ուսումնասիրության միջոցով ցույց տալ կենդանական աշխարհի բազմակերպությունը և բացել նրանց առաջ կենդանիների բնական սիստեմը վորպիս «որպանիզմիների տոմմարանական բաշխում» (Դարվին), վորն արտացոլում ե կյանքի զարգացման պատճական պրոցեսը: Այս հիմնական խնդիրի կապակցությամբ կենդանաբանության դասընթացն աշակերտներին պետք է այնպիսի տեղեկություններ տա կենդանիների մորֆոլոգիայից, ֆիզիոլոգիայից և սաղմարանությունից, վորոնք անհրաժեշտ են կենդանական աշխարհի բազմակերպության մեջ գոյություն ունեցող միանությունը հասկանալու համար:

2. Բնագիտական ցիկլի մյուս առարկաների հետ միասին նպաստել աշակերտների դիմեկնական-մատերիալիստական աշխարհայացքը մշակելու գործին, բացահայտելով կենդանական որգանիզմի կյանքի պրոցեսների նյութականությունը և ամբողջ կենդանական աշխարհի պատճական զարգացումը, հստակ կերպով հակադրելով գիտության հետևողական իդեալիստական հայացքներին ու կրոնական զատողություններին և մերկացնելով վերջինների կեղծությունն ու դասակարգային ելությունը:

3. Մի շարք կոնկրետ որինակների միջոցով աշակերտներին ցույց տալ կենդանաբանական գիտության նշանակությունը բընության բնական արագըրողական ուժեղությունը ավելի լրիվ տիրապետելու համար, վորը ձեռք է բերվում տեսության և պրակա-

1) Խըստիրը կազմել է պրոֆ. Ա. Ա. ՅԱԽՈՆՑՈՎԸ

կայի միասնության հետեանքով (պայքար մալարիայի և վորոգային հիվանդությունների դեմ, բույսերի պաշտպանությունը վասաստուներից, կենդանիների ընտանեցումը, բնական հարստությունների պաշտպանությունն ու փառւնայի վերակառուցումը և այլն):

4. Պարզաբանել աշակերտներին տեսական և կիրառական կենդանաբանության հետագա զարգացման լայն հեռանկարներու սոցիալիստական հասարակարգի պայմաններուն:

Այս ընդհանուր դրույթներից յենելով ել վորոշվում ե կենդանաբանության զպրոցական դասընթացի կառուցումը ի տարբերություն նախահեղափոխական հին զպրոցի համանուն դասընթացներին, վորաեղ կենդանաբանական սիստեմատիկան, լավագույն դեպում, ծառայում եր միայն վորպես չնորհակալ նյութինդուկտիվ մտածողությունը դաստիարակելու համար, մեր խորհրդային զպրոցում կենդանաբանության դասընթացը պետք ե ծագալի աշակերտների առաջ կենդանական աշխարհի բնական սիստեմը և նրա կազմակերպությունը, վորպես նրա պատմական զարգացման տեվական պլրոցեսի արտացոլում, վորն ընթառում ե միջավայրի փոփոխվող «պահանջների» կապակցությամբ կենդանաբանության դասընթացում աշակերտները պետք ե ծանոթանան այն բանի հետ, թե ինչպես մարդու սկզբում տարերայնորեն, իսկ հետո զիտակցորեն ու պլանաչափորեն փոփոխել և փոփոխում ե իրեն զբանապատճեն կենդանական աշխարհը, ընտանեցներով և բուծելով կենդանիների մի մասը, վոչչացնելով մյուսներին և ոժանդակելով ու հովանավորելով յերրորդներին:

Հնդ սմին չափազանց կարեռ ե, վորպեսզի կենդանական աշխարհի եվլուցիան լուսաբանիի բնական ընտրության դարվինյան տեսության մատերիալիստական դիրքերից: Յերբ դաստում խնդրի այս կողմի վրա բավարար ուշագրություն չի դարձնում եվլուցիան պլրոցեսի շարժիչ ուժերի վերաբերյալ աշակերտների մեջ անխուսափելիորեն սխալ պատկերացում և ստեղծվում: Նման գեղքերում նրանց հասկացողության մեջ կենդանին կամ ինքն ե վորեն կերպ ակտիվորեն «հարմարվում» նոր կենսական պայմաններին և դրան համապատասխան փոխում իր կտղմածքը, կամ թե արտաքին միջավայրի փոփոխություններն անմիջականորեն վերափոխում են որդանիզմը, առաջացնելով նրա մեջ նոր նպաստակահարմար հարմարությունների գոյացում: Ֆերեմն աշտակերտների պատկերացման մեջ կյանքի ասպարիդում

առավել բարձր կազմակերպված խմբերի յերեան դալլ բացադրվում ե և պարզորեն նրանով, վոր իբր թե կենդանիների նոր ձևեր ստեղծելու գործում բնությունը պետք ե միշտ անշեղորին զեպի վեր ու վեր ընթանա:

Այսպիսի ստարերային լամարկիզմը՝ հակասում ե դասընթացի հիմնական խնդիրներին և հեռացնում աշակերտներին բնությունը զիալեկտիկորեն ըմբռնելուց—զեպի զուտ իդեալիստական պատկերացումները՝ «գեպի կատարելագործում ձգտման» և փոփոխականության նպատակահարմարմար բնությի մասին: Ուստի կենդանաբանական աշխարհի առանձին խմբերն ուսումնասիրելիս, յուրաքանչյուր մասնավոր զեպքում, հերքելով նման մեկնաբարանություններն, անհրաժեշտ ե գասընթացի յեզրափակիչ մասում ուսումնասիրված նյութի հիման վրա ընդդեմ վոր միայն զարվինյան ընտրության տեսությունն ե տալիս միակ ձիշտ մատերիալիստական դիրքերի վրա կանդնած և փաստերի վրա հիմնաված կենդանական աշխարհի զարգացման պրոցեսի ըմբռնումը:

Կենդանիների սիստեմատիկան կվոլյուցիոն լույսի տակ շարդրելիս, այս կամ այն խմբի ծագմանը վերաբերող հարցերը անխղելիորեն պետք ե ներհյուսել դասընթացի խմբական հիմքեմեջ և վոչ թե մասն առանձնացված վորպես ինչ վոր լրացուցիչ տեղեկանքներ: Դրա համար, վորեն կենդանական խումբ բնութագրելիս դաստիարակություն պետք ե համեմատի նրան կառուցվածքի տեսակետից ավելի հին տիպերի հետ, և պարզաբանի պայմանները, վորոնք նպաստել են տվյալ խմբի առաջացմանն ու հետագա բարգավաճմանը:

Դասընթացի վորոշ հատկածներն այդ տեսակետից հատկապես լայն հնարավորություններ են ներկայացնում (որինակ հոդվածուածների տիպի ծագումը և նրանց մերձավոր կապը ողափորների հետ, սակայն նրանց նոր առանձնահատկության—խետինիզացված կուտիկուլայի—առկայությամբ, վորով ամենից հարմարված ների գերապրման հետեանքով, պայմանավորվել ե՝ փոխանցումը ավելի կարտարելագործված ձեի շարժման, ցամաքային միջաշայերի յուրացման հնարավորությունը և ցամաքային ձեերի ծայրահեղ բազմակերպությունը: յերկկենցաղների դասը և գուգահեռը գեղքուի թոքավոր վրձնաւողակավորների և քարածխի դարաշաղնի ստեղծոցի վալների միջոցով հին ձկներից յերկկենցաղաշաղների ծագման եշերեփուկի զարգացման միջն.կաթնասունների խմբերը վորպես կվոլյուցիոն պլրոցեսի վորոշ ուղղությունների արտահայտություն տվյալ դասի սահմաններում և այլն):

Կենդանու մարմնակազմի, նրա ապրելակերպի և միջավայրի միջև կապ սահմանելիս, անհրաժեշտ է խուսափել սխալ տեղելովիական ձևակերպությունը («Նրա համար վորաքաղի...»): Առանձնապես կարելոր և ավելի ցուցադրական որինակներով բանալ հարմարվածության հարաբերականությունը և պատմական ըլուսությը: Միջատների պաշտպանական գունավորումների հարաբերական նշանակությունը (Ըլուսունների սուր տեսողությունը, վորը հնարավորություն և աալիս գտնել հենց իրենց գունավորումով թագնված միջատներին, քանի վոր վառվունները և նկատելինները ուտելի չեն: «Անուտելիք» միջատները նախագուշացնող գունավորումով, վորոնք վոչնչացվում են զոտոշների և հետահան պիծակների կողմից), սպացող որդանիվմի համար տնտեսվոր և անհարմար ծովաստղերի և ծովալինների ճառագայթավոր սիմետրիան, վորապես նրանց նախնիների նստակյաց տպելակերպի կտպակցությամբ առաջացած և այժմ իր նշանակությունը կորցրած հարմարում և այլն:

Աշխատանքն այս կերպ կառուցելիս հակալը ողոնտական պլու-
պագանդայի անհրաժեշտ մոմենտները որպանապես կապված էին
նեն դասընթացի հիմնական բովանդակության հետ, չունդիսա-
նալով արհեստականորեն ձգված և զրուցից մեջ բերվող տարրեր:

կենդանաբանության դասընթացի մեջ, ինչպես նշված են վերեռում, կարեսը նշանակություն ունի տեսականի և գործնականի միասնության սահմանումը: Անհրաժեշտ է ընդգծել, վոր միայն պարագիտ վորդերի ղարպացման բարդ ցեղի ուսումնասիրությունը վերջ դրեց նրանց ինքնածնության վերաբերյալ յեղած նախկին պատկերացումներին, իսկ զարակման ուղիների հայտաբերումը հարավորություն տվեց հաջող կերպով պայքարել նրանց դեմ: Միայն միջատների կյանքի և նրանց կերպարանափոխությունների ուսումնասիրությունը անցյալում անհայտ, ուսցիոնալ միջնորդությունների հնարավորություններ բաց արեց բերքը վնասատու միջատներից պաշտպանելու ասպարիգում, իսկ պրակտիկայի պահանջներից բղիսող վնասատուների ավելի խորն ուսումնասիրությունը իրեն հերթին հարստացնում է զիտությունը նոր փաստացի նյութերով և դրա հետ միաժամանակ նոր պլազմատիկ խնդիրներ ե առաջ քաշում (որինակ, վնասատու միջատների ընական թշնամիների ուղագործումը նրանց գեմայսպես կոչվող բիոլոգիկական մեթոդներով պայքար կազմակերպելու համար): Նման ձեռվ ել տեսության և պրակտիկայի կապը

և վոլոսադարձ էախումն իբրարից կաբող են լուսաբանվել շատ սիս-
տեմատիկական այլ խմբերի ուսումնասիրության ժամանակ:

Դասընթացի ընդհանուր եվլուստին կառուցվածքի կապակցությամբ ներածական թեմայի մեջ զրգում էն հիմնական հասկացողություններ՝ ֆառնաների փոփոխման, յերկրի վրա կյանքի զարգացման դարաշրջանների և յերկրաբանական տարեգության հոկայական մասշտաբների մասին։ Ամենից հարմար մոռեցումն այդ հարցերի շարադրության համար կարող են տալ նոտածո ապարների տեղական բաց շերտերը, վորոնք պարունակում են ծովային կինդանիների անհետացած ձեւերի մնացորդներ (որինակ, խեցու քարածխային կրաքարերը, յուբայի շրջանի ու կավերը ամսնիտների և բիեթիտների հետ և այլն), քանի վոր սրանք վկայում են այն մեծ ժամանակաշրջանների մասին, վորոնք բաժանում են այդ որդանիզմների գոյությունը ներկայիս ժամանակաշրջանից, յերբ ծովը հարյուրավոր և հազարավոր կիրումներներով հեռու յե գտնվում այդ շերտերից և նման կենացանիներ նրանց մեջ արդեն չեն ոլոտահնում։ Սակայն սխալ կիրակը այդ հատվածը դարձնել պատճեկան յերկրաբանության գասընթացի մի կռնողեկա և պահանջել աշակերտներից հիշել առանձին դաշտաշրջանների և նրանց բնորոշող որդանիզմների անունները Յերկրաբանական դարաշրջանների աղյուսակը, ինչպիսին և Մ. Յու. Յուզեմի կինդանաբանության դասադրքի մեջ զետեղված (392-394 էջերը) և մեծացրած ձեռվներա վերաբատադրումը—վորպիս դիտողական պիտույքի, պիտք և ծառայի տվյալ մոմենտում վորպիս կինդանական բնակչության փոփոխման փաստի իլյուստրացիա յերկրազնդի վրա, վորտեղ իրենց տեղն են գտնում և գտնված բբածո մնացորդները (որինակ, յուբայան ամսնիտները), Հետազայում նույն աղյուսակը պիտք և կախել կինդանաբանության դասերին և ոգտագործել սխառեմատիկ կարգով ուսումնաբերքի խմբերի յերեան գալու և զարգանալու հարցերը պարզապես Վերջապես դասընթացի վերջում, ընդհանուր հանրագումարի բերելիս այդ աղյուսակը պիտք և դիտել հաջորդական կարգով և իր ամբողջությամբ։

Յերկըսուդ թիման «Կենտանի որպանիզմի կազմության ընդ-
անուր տեսությունը» կարեռ նշանակություն ունի կենդանա-
անության գասլնթացի բոլոր հետագա հատվածները հասկա-
ռալու համար, քանի վոր դժվար է հույս գնել այդ բնագավա-
ռում աշտկերտների ունեցած հստակ պատկերացումների վրա:

Առանց նման նախնական ակնարկի, կենդանու որգանիզմի հիմնական կենսական զործունելության մասին տրվող գաղափարը հարկադրված կերպով պետք է վոր առաջին անգամ տարրվեր այսպիսի անհարմար որյեկտի վրա, ինչպիսին ե ամյորան, ներվային սիստեմի նշանակությունը պետք է պարզվեր աղեխորշավորների ուսումնասիրության ժամանակ, արյունատար սիստեմի ֆունկցիան — անձեռավորդը նկարագրելիս և այլն: Կենդանու որգանիզմի հետ նախնական ծանոթացում տալու համար գորաց վորպես որյեկտ ունի այն անվիճելի առավելությունը, վոր բացի նյութի մատչելիությունից և հերձման տեխնիկայի պարզ լինելուց, զորտի մարմնի կազմությունն ունի բացահայտ նմանություն մարդու մարմնի կազմության հետ, վորը հեշտացնում է նրա առանձին որգանների ֆունկցիաների զրբունումը: Դրա հետ միասին զորտի զարգացումը, վորն սկըսվում է հոմարյա թե մերկ ձգաբջից, տալիս է հարմար մոտեցում որգանիզմների բջջային կառուցվածքը ճիշտ հասկանալու համար (վոչ թե բջիջներն են զոյացնում որգանիզմը՝ ինչպես վոր տունը կառուցվում է աղյուններից, այլ որգանիզմը ձգից զարգանալու ժամանակ առաջացնում է նորանոր բջիջներ): Ուղեղի զարգացումը պարզ սաղմերից՝ ներվային գլաններից՝ այստեղ ընդգծվում է այն նպատակով, վորպեսզի ցույց տրվի, վոր և այդ որգանն ել զարգացման արդյունք է հանդիսանում և վոր նրա ֆունկցիան, վորպես բարձր «հոգեկան» գործունելության որգանի, առաջանում է միայն նրա կազմության բարդացման կապակցությամբ:

կապահագություն է՝ կենդանական աշխարհի սիստեմի ջարագրումն ընթանում ե
վերընթաց կարգով, վորը համապատասխանում ե հվոլյուցիոն
պրոցեսի ընդհանուր ուղղությանը. Սակայն մի քանի առանձին
դեպքերում, մեծողական նկատառությունը հարկադրում են շեղ-
վել խիստ սիստեմատիկական հաջորդականությունից, ըստ վորում
հետագա ջարագրության մեջ պետք ե վերականգնեն ճիշտ հեռա-
նկարը. Այսպես որինակի, սպունգների մասին դասընթացում հիշ-
շատակվում ե աղեխորշափորներից հետո, քանի վոր այդ վերջին-
ները վորպես խումբ, վորոնք կանգնած են զարգացման բարձր
կազմակերպության ձևերի ուղղությամբ, արժանի յեն ավելի մեծ
ուշադրության, և քանի վոր սպունգները հանդիսանում են նրա
կողքի ճյուղը զարգացման փակուղու մեջ մտած, վորը հասկա-
նալի յե զառնում միայն նրանց աղեխորշափորների հետ համես-

մատելուց հետո Նույն մեթոդական նկատառություններով ել ընդէականուր նախնական ծանոթացումը քորպավորների տիպի հետ կատարվում ե ձկան վրա։ Չուկը հանդիսանում ե կոնկրետ, անմիջական ուսումնասիրության համար մատչելի ներկայացուցիչ, ջրային սկզբնական (նախնական) վաղնաշարարավորների, վորոնք և գանգի ու վողնաշարի առկայությամբ պահպանել են հին քորդավորներից ժառանգած հորինվածքի հիմնական գծերը։ Զից հեշտ ե անցնել (իրենց վողջ կյանքում քորդան պահպանող կը բժիկավոր ձկների միջացով) և նշտարածկին, վորպես «վողնաշարավորի առանց վողերի» (Ենգելսի արտահայտությունը), վորեմնի կազմության հետ ավելի հեշտ ե ծանոթանալ ձկան հետ մանրամասն ծանոթանալուց հետո։ Հետեւապես ձուկը նայվում ե այստեղ վոչ վորպես ձկների դասի ներկայացուցիչ, այլ վորպես հօրդավորների տիպի ներկայացուցիչ։ Այդ պատճառով ել այնպիսի հարցերն, ինչպիսին են ձկների կարգաբանումը, նրանց հիմնական կենսական ձևերը, գունավորման բիոլոգիական նշանակությունը, ձռւ դնելը, ձկնորսությունը և ձկնաբուծությունը նայում են արդեն վոչ այստեղ, այլ իր տեղում, այսինքն ձկների դասը ուսումնասիրելիս, յերբ նրան կհամնի հերթը քորդավոր կենդանիների սրատեմատիկայի շարադրման կարգով։

Կենդանաբանության գասընթացի գծով լույս տեսած դիտողական պիտույքներից՝ բացի Ա. Ա. Յախոնտովի „Յօօլօգիա և Յօտոմիա“ սերիաներից (Մ. Մ. Բելյայեվի և Ն. Գ. Կրեմենեցկու լրացուցիչ աղյուսակներով, զորոնք գտնվում են մամուլի տակ) պիտք ե ոգտագործվեն նաև նախկին յերկրաբանական ժամանակաշրջանների լանդշաֆտները (Վ. Վ. Մալենկոյի կազմած սերիան) և Ա. Գ. Վերբովսկու ու Ա. Ա. Յախոնտովի խմբագրությամբ լույս տեսած „Մир животных“ նկարների մի քանի սերիաները (կենդանիների, գլխավորապես կաթնասունների և թռչունների նկարները նրանց բնական դրությամբ):

Վորպես լիացուցիչ գրականություն կարելի յե հանձնարարել մի քանի ոլոպուլյար՝ զիտական դրքույկներ դպրոցական թհմատիկային մոտ գտնվող թեմաների շուրջը.

В. В. Лункевич, Мир низших организмов, Биомедгиз,
1935 год.

П. Ф. Рокицкий, Все живое из одного корня, Биомедгиз, 1937 год.

Ю. Шаксель, Жизнь и ее распространение на земле,
Биомедгиз, 1935 год.

С. А. Шейнис, Сходство и разнообразие в животном мире, Биомедгиз, 1937 год.

В. А. Дорфман, Размножение в мире животных и растений, Биомедгиз, 1937 год.

А. А. Яхонтов, Из воды на сушу (происхождение наземных позвоночных), Учпедгиз, 1938 год.

А. А. Яхонтов, Происхождение домашних животных, ГАИЗ, 1937 год.

Հաստատված և Ռեժիս Լուս-
ժողկոմատի կողմէց 1939 թ.
թ-ն մայիսի

ԾՐԱԳԻՐ

(64 Ժամ)

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ց Ո Ւ Խ

(2 Ժամ)

Կենդանաբանությունը գիտություն և կենդանիների մասին, վորն ուսումնաբրում և նրանց բազմակերպությունը կապված նրանց ապրելակերպի, նրանց ծագման և յերկրի վրա նրանց կոյության փոփոխվող պայմանների հետ:

Կոնկրետ ծանոթացում կենդանաբանական առաջակի հետ, մոտ տեսակների միացումը—սեռերի, սեռերինը—ընտանիքների, ընտանիքներինը—կարգերի մեջ (ազուավընտանիք թուչունների, կրծող—կաթնասունների, միջատների և այլ որինակների վրա). դասերը և տիպերը վորպես կենդանաբանական կարգաբանման բարձր միավորներ:

Նստվածքային լիոնատէսակները և գորպես կանքի պատմական յերկարատև զարգացման պրոցեսի վկայություն յերկրի վրա: «Աշխարհի ստեղծագործության» մասին գոյություն ունեցող կրօնական առասպելի անհեթեթությունը: Հասկացողություն կյանքի զարգացման հիմնական երաների (հին, միջին և նոր) և ժամանակի յերկրաբանական մասշտաբների մասին: Կենդանիների կարգաբանության (սիստեմատիկայի) ուսումնասիրության հակակրոնական նշանակությունը, վորպես կենդանական աշխարհի պատմական զարգացման բնական պրոցեսի արտացոլումն:

Կենդանաբանության նշանակությունը մեր յերկրի բնական հարստություններին ավելի լրիվ տիրապետելու համար:

ԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

ՀԵԴԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՏԵՍԱՌՅՅԱԿԻՆ

(6 Ժամ)

Կենդանու մարմնի ներքին և արտաքին կազմությունը (գորտի մարմի ներձման նյութի վրա): Հասկացողություն կենդանու որդանների հիմնական սիստեմների և նրանց կենասպործության մասին:

Սեռական գեղձեր և նրանց պրոդուկտները՝ արական և իգական սեռական բջիջները: «Ամեն մի կենդանի ձվից եւ: Հասկացողություն բեղմնավորման մասին՝ արական սեռական բջջի (սերմաբջջի) միաձուլումը իգական բջջի (ձվի) հետ: Բեղմնավորված ձվի տրոհումը և սաղմի գոյացումը: Բջիջների դիֆերենցիան սաղմի զարգացման ժամանակ և հյուսվածքների գոյանալը: Մաղմային շերտերը և հիմնական որգանների սաղմնավորումը. վողնաշարավորների սաղմերի ներվային գլանիկների յերեալը և ապագա վողնուղեղի ու զիսուղեղի սաղմի-ներվային խողովակի առաջացումը կենդանիների թշնային կազմությունը, վորպես ամբողջ կենդանական աշխարհի միասնականության արտահայտություն: Կենդանական բջիջի առանձնահատկությունները: Միաբջիջ և բազմաբջիջ կենդանիներ:

ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԻ

(5 Ժամ)

Նախակենդանիների ընդհանուր հատկանիշները, վորպես միաբջիջ կենդանիների, ամյուրայի և պարամեցիում ինֆուզուրիայի (հողաթափիկի) որբնակի վրա: Նրանց կազմությունը (պլոտովլազմա, կորիզ, ներտուռներ) և կենդանական գործունեյությունը (շարժումը, սննդառությունը, շնչառությունը, արտաթորությունը, զրդականությունը, բազմացումը):

Կանաչ եղգլինան վորպես մտրակավորների դասի (մտրակակիների) ներկայացուցիչ, մտրակավորների մոտիկությունը միաբջիջ ջրիմուռների հետ և կենդանական ու բուսական աշխարհի միջև խիստ սահմանի բացակայությունը, վորը վկայում է նրանց ընդհանուր ծագման մասին:

Հասկացողություն պարագիտ նախակենդանիների մասին Դիգենտաբիայի ամյուրան Մալաբիայի պարազիաը ու նրա զարգացումը մարդու և անոֆիլիս մոծակի մարմնում:

ԱԴԵԽՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՊԸ (Յ Ժամ)

Քաղցրահամ ջրի հիդրան վորպես աղեխորշավոր կհնդանիների
ներկայացուցիչ Հիդրայի կազմությունը, հյուսվածքների զիֆե-
րենցիացիայի սկիզբը: Հիդրայի կննսակերպը, սեռական և անսեռ-
բազմացում, կորցրած մասերի վերականգնման խիստ արտահայտ-
ված ընդունակությունը (ունկեներացիան) կապված նրա մարմնի
կազմության հարաբերական միակերպության հետ: Ծովային
պոլիպներ և մեղուզներ, մեղուզայի զարգացումը պոլիպից և նրա
կազմության բարդացումը աղատ լողացող կյանքին անցնելու
կապակցությամբ կորալյան պոլիպներ, կրային կյախքի նշա-
նակությունը կապված նրանց ծովի ալիքահարության շրջանում
գոյություն ունենալու պայմանների հետ: Կորալների գերը ծովի
կեղեւ գոյացման պրոցեսում:

Աղեմարի շապուհները և սպունգները, վորպես ստորին բազմաթիվ կենդանիների յերկու հիմնական խմբեր, Գաղութային մտըակավորները և բազմաթիվ ջանության ծագումը, Միաբջջային ստաղիան բազմաթիվ կենդանիների դարբացման պրոցեսում:

Q u i t t e s h e l l S h o c k (4 diff.)

Վորդերի ձեկերի բազմազանությունը և նրանց բաժանումն
առանձին յենթատիպերի: Տափակ վորդերի յենթատիպը, Ծծան-
ներ, նբանց առանձնահատկությունները, կապված պարագիտա-
յին կենսաձևի հետ: Յերիզորդ, եխինոկոկ, դրանց գարզացումը,
տերերի փոխելու յերևույթը և դրա բիոլոգիական նշանակու-
թյունը: Պարագիտ վորդերի գեմ պայքարելու բիոլոգիական հի-
մունքները:

Կլոր վորդերի յենթատիպը Առկարիդներ, ոսարիցա, տրիսինա. կազմության գլխավոր առանձնահատկությունները կապված պարագիտային կենսաձեվի հետ։ Վարակման ուղիները և վարակման դեմք ձեռք առնվելիք կանխիչ միջոցառումների բիուրգիական հիմունքներ։

Ողափոր վորդերի յենթատիպը, Անձրեվավորդը, վորպես
այդ յենթատիպի ներկայացուցիչ, նրա ներքին և արտաքին կազ-
մությունը կապված կենսածելի հետ, Ողափոր վորդերի ավելի
բարդ կազմության հատկանիշները—մարմնի յերկրորդ խոռոչը,
հյուսվածքների և գործարանների սիստեմի դիմերենցացիան:

Յերկշերտավոր սաղմի ՝գասարուլայի ստադիան վորդերի զարգացման պրոցեսում, վորապես նրանց հնագարյան աղեխորշ-ներից ծագելու վկայություն:

ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՊԸ (2 ժամ)

ԱՆՎԱՏԱՄԸ (կամ գետային մարզաբանակեցին) վարպես փափ-
կամարմինների տիպի ներկայացուցիչ, նրա կազմությունը, կապ-
ված նրա կենսաձևվիճակի հետ: Թերթախորհկավորների դասի ընդ-
հանուր գծերն անառամիտ որինակի վրա: Դրանց մի քանի ձեռքի
արդյունագործական նշանակությունը:

Փորստանիների դաս: Յամաքային և ջրային խխունջներ. Նրանց արտաքին կազմությունը և կենսաձեռ: Խխունջները և կողինջները, վորպես գլուղատնաեսության վասարուներ:

Գլխոտանիների գասը (կարակատ, կալմարներ, ութոտանիներ) վորպես փափկամարմանների բարձր խումբ, նրանց արտաքին պատկերը, շարժվելու ձևը և կենսաձևը։ Գլխոտանիների ծաղկման շրջանը յերկրի կյանքի անցած ժամանակաշրջանում (ամռնիաներ, բերեմի իաներ) և դրանց հետագա անհետացումը։

Փափկամարմինների նշանակությունը կրի շրջանառության
և նստվածքային ապարների գոյացման մեջ:

Փափկամարմինների ջրային թրթուռների և ողակավոր վորպերի ջրային թրթուռների նմանությունը, իբրև նրանց ընդհանուր ծագման վկայություն:

ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ՏԻՊԸ (9 Ժամ)

Գետային խեցգետինը, վորպես հոգվածոտանիների տիպի ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմությունը կապված նրա կենսաձևի հետ: Կազմության բարդացումը ողավոր վորդերի համեմատությամբ. Խիտինային ծածկույթը և հոգվածավոր վերջավորությունները վորպես հոգվածոտանիերի բնորոշառանձնահատկությունն: Մարմնի տարբեր հատվածների վերջավորությունների ձեվափոխությունները, կապված զրանց փունկցիաների տարբերության հետ:

Հողվածոտանիների տիպի բաժանումն առանձին դասերի:
Խեցգետինների դասի ընդհանուր հատկանիշները: Ստորակարգ
խեցգետնանմաններ (դաֆնիաներ և ցիկլոպներ) և զբանց նշա-
նակությունը բնության ընդհանուր կյանքում և ձկնատնտեսու-
թյան մեջ:

Սարդանմանների դասի և բազմութանիների դասի արտաքինսկության և կենսաձերի գլխավոր բնորոշ առանձնահատությունները:

Միջատների դասը Միջատների արտաքին և ներքին կազմությունը: Դրանց բազմացման և զարգացման առանձնահատությունները: Եթիվ և թերի կերպարանափոխվող միջատները: Հասկացողություն միջատների գլխավոր խմբերի մասին և նրանց համառոտ բնութագրումն ըստ թեկերի ու բերանի մասերի կազմության և ըստ կերպարանափոխման տիպի:

Միջատների ձեվերի բազմաքանակությունը և կյանքի տարբեր պայմաններին հարմարվելու բազմակերպությունը: Միջատների պաշտպանողական գունավորումը (հովանավորող, նախազգուշացնող միմիկը): այդ հարմարանքների հարաբերական նշանակությունը և նրանց մեջ նախասկզբնական նպատակահարմարության բացակայությունը: «Համարակական» միջատները: Մեղու, նրա բիոլոգիական առանձնահատկությունները և մեղուների ողտագործումը մարդու կողմից: Մեղվի ընտանիքի ծագման հարցը (մենակյաց մեղուներ, իշամհղուներ): Մենակյաց և ժամանակական» թաղանթաթեքավորների (շնամեղուների, մեղուների, մրջունների) բնազդի բարդությունը և նրանց գործունեյության գիտակցական բնույթի մասին յեղած իդեալիստական և կրոնական յենթադրության անձտությունը:

Միջատների նշանակությունը բնության կյանքում և տընտեսության մեջ: Միջատները և ծաղկինները: Գյուղատնտեսության վասատու միջատները: Վարակիչ հիվանդություններ փոխազդող միջատները: Միջատների թվի տատանումներն առաջացնող բնական պատճառները (ֆաստառների մասսայական հայտընվելը, նրանց հետագա անհայտացումը և այլն) վասատու միջատների բիոլոգիայի գիտական ուսումնասիրության հակարոնական և տնտեսական նշանակությունը:

Պարագիտ միջատների (հետահան պիծակների, տախինանների) գործունեյության ողտակարությունը մարդու համար: Վնասատու միջատների գեղ պայքարելու բիոլոգիական հիմունքները և այդ պայքարի հիմնական մեթոդները:

Միջատների կապը ողավոր վորդերի հետ: Միջատների թրթուրների վորդանման կազմությունը և նրանց ավելի պարզ արտահայտված ներքին սիգմենտացիան վորպիս աղացույց, վորնանք ծագել են ողակալսր վորդերից (հնագարյան բազմութիների միջոցով):

ԳՅԱՅՄՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՏԻՊԸ (1 ժամ)

Ծովասաղը վորպիս փշամորթերի տիպի ներկայացուցիչ, նրա արտաքին տեսքը և կենսաձերի կերպը: Զրատար սիստեմը վորպիս փշամորթերի բնորոշ առանձնատկություն: Հասկացությունը միջատների գլխավոր առանձին դասերի մասին: Փշամորթերի զարգացումը, նրանց յերկրաբանական հնությունը (ծովախնձորներ, ծովաշղացաններ) և նրանց ճառագայթածն սիմետրիան, վորպիս հատկանիշ, վորն առաջացել ենստակուցուցիչները:

ԼԱՐԱԿԱՐՆԵՐԻ ՏԻՊԸ (4 ժամ)

Վողնաշալակվորների նախնական համառոտ բնութագիրը, վորպիս մի խմբի, վորը միավորում և իր մեջ լարավոր կենդանիների ձնշող մեծամասնությունը: Վոսկրավոր ձուկը, վորպիս ջրային սկզբնական վողնաշարավորների ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմությունը, կապված ջրային կենսաձերի հետ: Ներքին կմախքը (վողնաշար և զանդ) վորպիս վողնաշարավորների բնորոշ առանձնահատկություն:

Կրծկային կմախք ունիցող ձկները (թառավազգիներ, շնաձկներ), վորպիս վողնաշարավորի կազմակերպման ավելի սարքին ձեւ: Քորդան, կամ մեջքի լարը վորպիս ստորակարգ ձկների ներքին կմախքի հիմք: Քորդայի աստիճանական արտամղումը վողնաշարի կազմից բարձրակարգ ձկների մոտ, նրանց դարձագումը:

Նշտարիկը վորպիս ձկների հին նախահայլերին մոտիկ ձեվ, վողնաշարավորի և նշտարիկի այս շանվողնաշար վողնաշարավորի՝ միջն յեղած նմանությունն ու տարբերությունը: Կենդանական տէխնարհին նախիկին բաժանումը վողնաշարավորների և անվողնաշարավորների: Այսպիսի բաժանման անբավարար լինելը ժամանակակից գիտության տվյալների տեսակետից և լարավորների տիպի սահմանումը:

Լարավորների տիպի ընդհանուր բնութագիրը: 1) լարի (քորդայի) առկայությունը, 2) մեջքի ներվային խողովակը, 3) խորկային ճեղքերի առկայությունը: Լարավորների դասակարգումը՝ գանգազուրկների և վողնաշարավորների յենթատիպեր: Վորդերի և նշտարիկի վաղ սաղմային ձեվերի (յերկշերտ սաղմ) նմանությունը վորպիս վկայություն նրանց ընդհանուր ծագման-հաւաքույն աղեխորշավորներից:

Q u e b r a n t u (3 dmas)

Զկների դասի ընդհանուր բնութագիրը և նրա բաժանումը կարգերի: Ճեխկախորիկների (կամ ընդլայնաբերաններ) և թառափազգիներ. այդ կարգերի հարաբերական հնությունը և նրանց ներկայիս տարածումը, Վոսկրավոր ձկները վորպես ավելի նորագույն խումբ, վորոն իր ծաղկմանն և հասել Յերկրի կյանքի արդի ժամանակաշրջանում:

Զկների արտաքին կերպարի բազմազանությունը, կապված տարբեր կենսձևին և առաջացած բնական ընտրության հետեւ վանքով (հատակին և բարձրալող ձկներ, «խաղաղ» և գիշատիչ ձեկներ, խորջրյա ձկների առանձնահատկությունները):

Զկների բազմացումը, ածած ձվերի քանակի և սերնդի պաշտպանության բնադրի միջև յեղած կապը: Արդյունագործական ձկնորսությունը և նրա կապը ձկան կյանքի սեղունային յերեկույթների (ձկնորսության շրջանների) հետ: Ծովային ձկնորսությունը և նրա զարգացումը ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության պայմաններում: Զկնաբուծությունը և լճային անտեսությունը:

ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԴԱՍ (2 ԺԱՄ)

Գորտը վորպես յերկկենցաղների դասի ներկայացուցիչ, նրա արտաքին և ներքին կազմությունը, գորտի համեմատությունը ձկան հետ և նրա տռանձնահամարությունները, կապված ջրից յամաք գուրս գալու հետ: Ջրավաղանների առկայությունը վորպես գորտի համար անհրաժեշտ պայման: Ծերեփուկի կողմից ձըկնակերպ կենդանու ստաղիան անցնելը վորպես յերկկենցաղների պատմական զարգացման պրոցեսի արտացոլում: Պոչավոր և անպոչ յերկկենցաղները:

Հնագույն յերկինց ցաղանքը — ստեղծոցի փալները և նրանց կապը հին վրձնալողակ ձկների հետ։ Նրանց յերևան գալը նախապատրաստող պայմանները։ Յերկինց ցաղների ծաղկած վիճակը քարածխային դարաշրջանում («յերկինց ցաղ» բուսականության զարգացման հետ միաժամանակ)։ Յերկինց ցաղների վոչ կատարյալ հարմարվածությունը ցամաքային կենսաձևին։

ՍՈՂՈԿՆԵՐԻ ԴԱՄ (2 ԺԱՄ)

Մողեսը վորսկիս սողունների դասի ներկայացուցիչ. Նրա արտաքին և ներքին կազմությունը, կապված նրա կենսաձեի

Հետո: Սողունների տարբերությունը յերկինցաղներից և նրանց ավելի բարձր հորինվածքի գծերը՝ Սողունների բազմանալու առանձնահատկությունները, վորով և պայմանավորվել են րանց համար լրիկ ցամաքային կյանքին անցնելու հնարավորությունը:

Սողոմների բաժանումը կարգերի և նրանց համառոտ բնութագիրն առանձին ներկայացուցիչների որինակների վրա (մողեսներ, ոձեր, կոկորդիլոսներ, լրիաներ):

Սողունների ծագումը ստեղոցեֆալներից։ Ժամանակակից սողեսների դադաթի աչքը վորպիս հին ստեղոցեֆալներից և վըրձնալողակ ձկներից ժառանգած առանձնահատկություն։ Սողունների բարզավաճումը և բազմազանությունը Յերկրի կյանքի միջին դարաշրջանում և նրանց հետագա սերատումը (вымирание):

ԹՐՈՉՈՒՆՆԵՐԻ ԴԱՍ (6 Ժամ)

Թագունների մարմին արտաքին և ներքին կառուցյալածքը կապված նրանց ապրելակերպի հետ (ցույց տալ կոնկրետ որի՞ն ակի վրա): Արտաքին նկարագիրը (փերաբաղումը, կտուցը, վուները, պարանոցի ձկունությունը, իրանի համարյա թիւ լրիկ անշարժության առկայությամբ): Ներքին գործարանները: Թըուչունների կմախքի առանձնահատկությունները: Առջեի և հետին վերջավորությունների մասնագիտացումը, թեվերի աշխատանքը թուիչը ժամանակ: Թագունների և սողունների կազմության ընդհանուր գծերը նրանց հարմարանքային հատկանիշների տարրերության պայմաններում:

Զուն և նրա կազմությունը: Սաղմի զարգացումը ձվի մեջ:
Խոկային ճեղքերի սուբդիմենտները վորպես վկայություն, վոր
ցամաքային վողնաշարավորները ծագել են հին ջրային ձևերից:
Թռչունների և սողունների սաղմի նմանությունը, վորը ցույց ե
տալիս նրանց մոտիկ ազգակցությունը:

Սերատված նախաթռչունները վորպես կապող ողակ թռչունների և սողունների միջև։ Խսկական թռչունների ծաղկումը Յերկրի կյանքի նոր դարաշրջանում. նրանց կենսական առավելությունները նախորդ դարաշրջաններում ապրած թեվակոր մողենների հանդեպ (տաքարյունությունը, փետրավորումը, թևերի ավելի կատարելազործված կառուցվածքը։ Թոչունների դասի ձևերի բազմակիրարությունը, կապված միջավայրի պայմանների և կերի հայթայթման միջոցների հետ, վորպես բնության մեջ կատարվող ավելի հարմարվածների ընտրության արդյունք։

Թուչունների բազմացումը Զվի գունավորման և ձվի բիո-
լոգիական նշանակությունը: Բնակալ և բնախույս թուչունները
թուչունների չուն, նրա բիոլոգիական նշանակությունը և ծա-
գումը:

Թուչունների տնտեսական նշանակությունը

ԿԱԹՆԱՍՈւՆ ԴԱՍ (10 ժամ)

Կաթնասուն կենդանիների առանձնահատկությունները վող-
նաշարավորների մյուս գասերի համեմատությամբ (կոնկրետ որի-
նակող), արտաքին և ներքին կազմությունը, բազմացումը և զար-
դացումը կաթնասունների և թուչունների «տաքարյունությու-
նը» և ուղեղի ավելի բարձրաստիճան զարգացումը, վորոնց
պատճառով այդ կենդանիները «սառնարյուն» վողնաշարավոր-
ների համեմատությամբ, ավելի պակաս չափով են կախված
փոխուղղող արտաքին պայմաններից: Կաթնասունների ձեռքի
բազմակերպությունը, կազմած կենսաձևի և միջավայրի հետ,
վորոնք ստեղծվել են պատմական զարդացման հետևանքով, կազ-
մած շրջապատող միջավայրի փոփոխող պահանջների հետ:

Միանցքանիների կամ ձվածինների յենթապասը (բազա-
կառուց, յեխիդնա) վորպես կաթնասուններին և սողուններին
միացնող անհետացող խումբ):

Պարկավորների յենթապասը վորպես կաթնասունների զար-
դացման ավելի բարձր աստիճան (միանցքանիների համեմատու-
թյամբ): Պարկավորների ժամանակակից տարածումը և նրանց
ձեռքի բազմակերպությունը Ավտրալիայում, այդ մայր ցամաքի
վարուց բաժանվելու առնչությամբ:

Բարձրակարգ կամ ընկերքավոր կաթնասունների յեն-
թապասը: Բարձրակարգ կաթնասունների արագ ծաղկումն ու մաս-
նագիտացումը յերկրագնդի լյանքի նոր զարաշրջանում:

Միջատակերների կարգը վորպես մի խմբակի վորը պահպանել
ե իր ավելի մոտիկությունը հին բարձրակարգ կաթնասունների
ընդհանուր նախայլերի հետ (ատամնային ապարատի թույլ
գիֆերենցումը, փոքր չափերը):

Զեռքաթեանիների կարգը վորպես մասնագիտացած (թըռ-
չելու ընդունակության կապակցությամբ) միջատակերների մո-
տիկ խմբակի:

Կրծողների կարգը վորպես առավելապես բուսական կերպ

մնվելու հարմարված խմբակի: Կրծողների գիլուգիական առանձ-
նահատկությունները, վորոնք պայմանավորել են նրանց ծաղո-
կումը մեր դարաշրջանում: Վորուղատնտեսության մասաւու-
կրծողների:

Գիշատիչների կարգը և այդ կարգի մեջ մտնող գլխավար
ընտանիքները կաստավոտանիների և կետազգիների կարգերը վոր-
պես գիշատիչ կաթնասունների խիստ փոխված և մասնագիտաց-
ված ազգակիցների:

Մբակակավոր կաթնասունների ծաղկած վիճակը, կապված բաց
տափառանների առաջացման հետ, անհետացած (սերատված)
քիչ մասնագիտացված նախամբակավորները (ֆենակող) և ժա-
մանակակից միասմբակավորների և յերկսմբակավորների խմբերի
զարգացումը: Կնճիթավորների խմբերի առանձնահատկություն-
ները և նրանց ծագումն ավելի մանր և ավելի քիչ մասնագի-
տացված ձեռքերից:

Պրիմատների կարգը, նրա առանձնահատկությունները և մո-
տիկությունները միջատակերներին, կապիկները վորպես մազլցող
կենդանիներ: Մարդը վորպես պրիմատների կարգի անդամ, մար-
դու կառուցվածքի այն գծերը, վորով նա տարբերվում և կեն-
դանիներից:

ՅԵԶՐԱԿՈՒԹՅՈՒՆ (5 ժամ)

Կենդանական աշխարհի եվոլյուցիոն զարգացման գլխավոր
մոմենտները և հիմնական ուղիները (ուսումնասիրված նյութի
հիման վրա):

Մարդու գործունեյությունը վորպես նոր ֆակտոր ըստ ժա-
մանակի, կենդանական աշխարհի եվոլյուցիայի մեջ, կենդանինե-
րի ընտելացումն ու ընտանեցումը (կազմած տնային գլխավոր-
ցեղերի ծագման հարցի հետ) կենդանու հատկանիշների և աբն-
տեսական հատկությունների փոփոխություն: որհետական ընտրու-
թյան կիրառման շնորհիվ: Անասնաբուծության զարգացման հեր-
թական խոդիրները ԽՍՀՄ-ում յերրորդ հնգամյակի ընթացքում,
Համ (թ) և 18-րդ համագումարի վորոշումների հիման վրա:
Մորթատու գազանաբուծությունը վորպես անասնաբուծության
նոր ճյուղ: Բնական սեռությունների պաշտպանության և կենդա-
նական աշխարհի վերակառուցման խոդիրները սոցիալիստական
տնտեսության պայմաններում:

Անասնաբուժության պրակտիկան և մարդու կողմից կատարվող արհեստական ընտրությունը վորպիս Դարվինի ուսմունքի ամենակարևոր նախազրյաներից մեկը: Բնական ընտրության գարվինյան տեսության հիմնական գրույթները, վորպալիս և միակ ճշգրիտ ըմբռնումը եվոլյուցիոն պրոցեսը մատերիալիստորեն հասկանալու և վորը գինում է մարդկությանը բնության հետագա վերափոխման համար:

ՀԱՅՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒԻ. ՔՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՑ

1. Գորտի հերձումը;
2. Գորտի մաշկի և ուրիշ հյուսվածաբանական պրեպարատների նայելը մանրադիտակով;
3. Խնֆուզորիաների և մտրակավորների նայելը մանրադիտակով:
4. Կենդանի հիգրայի դիտումը;
5. Անձրեվազորդի հերձումը;
6. Անատամազորդի հերձումը;
7. Գետային խեցգետնի կամ խոշոր միջատի (ու խավարասերի) արտաքին զննումը և հերձումը;
8. Ձկան արտաքին զննումը և հերձումը;
9. Թոչունի արտաքին զննումը և հերձումը;
10. Կաթնասունի հերձումը.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

1. Беляев М. М. и Кременецкий Н. Г., „Методика зоологии“, Учпедгиз, 1937 г.
2. Кременецкий Н. Г., „Микроскоп и работа с ним“, Учпедгиз, 1937 г.
3. Яхонтов А. А., Школьное естествознание и задачи антирелигиозного воспитания (журн. „Школа взрослых“, № 1, 1938 г.).
4. Догель В. А., Учебник зоологии беспозвоночных, Биомедгиз, 1937 г.
5. Кашкаров Д. Н. и Станчинский В. В., Курс зоологии позвоночных животных, Биомедгиз, 1935 г.

6. Огнев С. И., Учебник зоологии позвоночных., Биомедгиз, 1938 г.

7. Огнев С. И., Зоология. Пособие для преподавателей средней школы, Учпедгиз, 1939 г.

8. Матвеев Б. С. (ред.), Курс зоологии, тт. I и II, Учпедгиз, 1938 г.

9. Серебровский П. В., История органического мира, „Моск. Рабочий“, 1932 г.

10. Северцов А. Н., Главные направления эволюционного процесса, Биомедгиз, 1934 г.

11. Райков Б. Е. и Римский-Корсаков М. Н., Зоологические экскурсии, Учпедгиз, 1939 г.

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ. ՅԵՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱ.

(Նախատեսնված և 44 ժամի համար *)

Մ Ր Ա Գ Ի Բ **)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Հասկացողություն անատոմիայի առարկայի մասին և մարդու անատոմիայի ու ֆիզիոգիայի դերը կրոնի և իդեալիզմի դեմ մղվող պայքարի պատմության մեջ։ Մարդու մարմնի գունդցիաների և կազմության ուսումնասիրության յեղանակները։ Մարդու և կենդանիների նմանությունն ու տարրերությունը։ Աշխատանքը, վորպես մարդու գոյության անհրաժեշտ պայման։

1. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԲՁՋԱՑԻԹՅՈՒՆԸ (4 ժամ)

Բջջի վերաբերյալ ուսումնքի պատմությունը։ Բջջի կազմությունը՝ պրոտոպլազմա, բջջակորիզ, կորիզակի կենդանական և բուսական բջիջների նմանությունը։ Բջջի բազմացումը՝ ուղղակի և անուղղակի բաժանում։ Բջջի բազմապիսությունը կենդանիների և մարդու որդանիզմում։ Հյուսվածքների տեսակները՝ եպիթելիալին, շարակցական, վոսկրային, կրծկային, ճարպային, մանրաթելային (հարթ և լայնակի շերտավոր), ներվային։ Հասկացողություն որգանի և որգանների սիստեմի մասին։ Համառոտ տվյալներ որգանիզմների բջջային կառուցվածքի ուսումնքի պատմությունից, որգանիզմի մասին յեղած միևնական և իդեալիստական պատկերացումների դեմ պայքարելու լուսաբանությամբ։

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանքներ

1) Կենդանական և բուսական բջիջների պրեպարատների դիտում մանրագիտակի տակ։

2) Մարդու բերանի խոռոչի եպիթելի և գորտի մաշկի մանրագիտակային պրեպարատների պատրաստումը։

* Ժամերի բաժանումն ըստ թեմաների որյենափր բնույթ ունի

** Կազմեց պրոֆ. Յ. Բ. Բարսեղյան

2. ՎՈՍԿՐՍ. ՄԿԱՆԱՑԻՆ ՍԻՄՏԵՄ (5 ժամ)

Կմախքը վորպես մարմնի ամուր հենարան։ Վոսկրների տեսակները։ Վոսկրի կազմությունը՝ վոսկրաթաղանթ, հօծ և սպունգանման վոսկրանյութ, վոսկրածուծ։ Վոսկրի բաղադրությունը՝ որգանական և անորգանական նյութերը։ Վոսկրի զարդացումն ու աճը վոսկրների միանալն իրար հետ։ Հողի կառուցվածքը։

Ըսդհանուր ակնարկ կմախքի կառուցվածքի մասին, դանդ, վողնաշար, կրծքի վանդակ, կոնքի և ուսային գոտիներ, վերջավորություններ։

Մարդու և վողնաշարավոր կենդանիների կմախքի կառուցվածքի նմանությունը։ Մարդու կմախքի կառուցվածքի առանձնահատկությունը կապված նրա մարմնի ուղղաձիգ զերքի հետ։ Կմախքի նշանակությունը, վորպես շարժման պասիվ տպարատի։

Մկանները—շարժման ակտիվ ապարատ։ Կծկվելությունը մկանի հիմնական հատկություն։ Մարդու մարմնի դլամավոր մկանները և նրանց աշխատանքը։

Մկանների մեջ կատարվող ֆիզիկական և քիմիական փոփոխությունները մկանային աշխատանքի ժամանակ։

Աշխատանքի և ֆիզիկական վարժությունների նշանակությունը վոսկրամկանային սիստեմի զարգացման համար։

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանքներ

1. Կմախքի վոսկրների դիտումը։

2. Վոսկրի անորգանական մասի բաղադրության և կրանյութից զրկված վոսկրի ցուցադրում։

3. Մարդու մկանային սիստեմի, աղյուսակների, մուլյաժների կամ պրեպարատների դիտում։

4. Մեկուսացրած մկանի պրեպարատի պատրաստում։

5. Քիմիական զրգույշի ազգեցության (փորձ՝ գործի վրա) տակ կատարվող մկանային կծկման դիտում։

3. ԱՐՑՈՒՆ ՅԵՎ ԱՐՑԱՆ ՇՐՋԱՆՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

Արյան շրջանառության հայտնագործման պատմությունը Գիտության յեկեղեցու դեմ պայքարի պատմությունից Փայլուն եպիզոդներ (Վեղալիյ, Մերվետ, Գարվեյ)։

Արյան բազաղությունը, արյան ողջակմա, արյան սպիտակ և կարմիր մարմիկներ, արյան թիթեղիկներ: Արյան մակարդակների Արյան նշանակությունը մարդու որգանիզմի համար:

Հասկացողություն արյան պաշտպանողական հատկությունների և ինֆեկցիաների գեմ պայքարելու (իմունիտե) մասին: Արյան փոխներարկումը: Լիմֆան և նրա բազագրությունն ու նշանակությունը: Արյան շարժումն որգանիզմում: Արյան շրջանառության մեծ և փոքր շրջան: Սրտանոթային սիստեմի կաղմությունը: Սրտի կազմությունը և նրա աշխատանքը: Մարդու սրտի գործունեյության մեջ կատարվող փոփոխությունները տարբեր աշխատանքի ազդեցության տակ: Արյան շարժումն անոթներում: Պույլս (զարկերակ): Սրտի և անոթների գործունեյության կարգավորումը:

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանքներ

1. Արյան մանրադիտակային պրեպարատների պատրաստումը և դիտումը:
2. Արյան շրջանառության սիսման:
3. Սրտի անատոմիական պրեպարատի դիտումը:
4. Դորտի թաթի մեջ կատարվող արյան շրջանառության դիտումը:
5. Դորտի սրտի աշխատանքի դիտումը:

4. ՇՆՋԱՌՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)

Մարդու շնչառության որգանների կառուցվածքը: Շնչառության մկանները, կուրդի, շնչափող, բրոնխներ, թոքեր: Ներշնչման և արտաշնչման մեխանիզմը: Հասկացողություն թոքերի կենսական տարրողության մասին: Գաղափոխանակումը թոքերի մեջ: Ներշնչվող և արտաշնչվող ողի բաղադրությունը: Շնչառության կարգավորումը:

Արյան դերը որգանիզմում թթվածնի և ածխաթթու գաղի փոխաղման մեջ: Գաղափոխանակումը հյուսվածքներում: Շնչառության որգանների գործունեյության փոփոխությունը տարբեր աշխատանքի ազդեցության տակ: Ածխանոտ դաշով (շմոլով) թունավորելը: Շնչառությունը ծանրաշափային ցածր ճնշման պայմաններում:

Թ. Ն. ներդորդությունը շնչառության որգանների վրա: Հաշադարձ:

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանքներ

1. Մարդու շնչառության ապարատի անատոմիական պրեպարատների, մուլյամների և նկարների դիտում:
2. Դոնդերսի սիսման:
3. Շնչառության որգանների կողմից ածխաթթու գաղափառը:
4. Սպիրոմետրի վրա կատարվող փորձի ցուցադրումը:
5. ՄՆՈՒՆԴ ՅԵՎ ՄԱՐՍԱՌՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

Մնունդը և նրա նշանակությունը վորպես մարդու որգանիզմի համար նյութերի և եներգիայի աղբյուր: Մնունդի բաղադրությունը՝ Գլսավոր սննդաբառ նյութերը՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, վիտամիններ: Մնունդի վերամշակումը մարսության գործարանում և նրա նշանակությունը: Հասկացողություն ֆերմենտների մասին:

Ընդհանուր ակնարկ մարսողական ապարատի կառուցվածքի մասին: Մարսողությունը բերանի խոռոչում, կլանումը, մարսողությունը ստամոքսում, բարակ և հաստ սողիքներում: Ներծծում: Լյարդի գերլը: Մնունդառության առողջապահությունը (զիգիենան):

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանքներ

1. Մարսողական ապարատի անատոմիական պրեպարատների, նկարների և մուլյամների դիտում:
2. Կատվի հերձում (միյելլուլյն ժամանակ ցուցադրվում են շնչառության և արյան որգանները):
3. Ուլացի քայլքայումը (ձեղքումը) թքի ազդեցության տակ:
4. ՆՅՈՒՆԴԵՐԻ ՅԵՎ ԵՆԵՐԳԻԱՅԹ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ (3 ժամ)

Գաղափարը ասսիմիլիացիայի և դիսումիլիլացիայի մասին որգանիզմում: Այս պրոցեսների միանականությունը, վորը հանգանիզմում և նյութերի փոխանակման եյությունը նյութերի փոխանակությունը և եներգիայի փոխանակումը, վորպես որգանիզմի հիմնական կենսուլան փունկցիա:

Սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի փոխանակությունը: Մնունդանյութերի կալորիեականությունը: Հանդային նյութերի և ջրի փոխանակություն: Վիտամիններ:

Գործնական աշխատանիվներ

Խնդիրների լուծում կերային սացիոնների հաշվարկման
բնագավառում:

7. ԱՐՏԱԹՈՐՈՒԹՅՈՒՆ (2 ժամ)

Նյութերի փոխանակման վերջնական արդյունքների և նը-
րանց արտաթորպելու անհաժեղությունը: Միզաթորային ո-
պարատի կազմությունը: Յերկիամների աշխատանքը: Մեզի բա-
ղադրությունը: Միզափամփուշտի գերը:

Մաշկը և թոքերը վորպես արտաթորության որգաններ:
Քրտինք և նրա բաղադրությունը: Զերմության արձակումը
մաշկի մակերեսից տարբեր պայմաններում: Մաշկի առողջապա-
հությունը (գիգիենան):

Թ. ներգործումը մաշկի վրա:

Ցուցադրում՝

Արտաթորության որգանների թաց պրեպարատների և
մուլյաժների ցուցադրումը:

8. ՆԵՐԱԿՑԻՆ ՍԻՍՏԵՄ (6 ժամ)

Ներվային սիստեմի նշանակությունը: Նրա կաղմության
ընդհանուր ահասությունը: Մարդու և վողնաշարավոր կենդանի-
ների ներվային սիստեմի նմանությունն ու տարբերությունը

Հասկացողություն նեյրոնի մասին: Ներվային հյուսվածքի
հատկությունները (գրգուականություն, հաղորդականություն):
Հասկացողություն սեֆլեքսի և ուժիլիկոսորային աղեղի մասին:
Վողնուղեղի, նրա կազմությունը: Պերիֆերային ներվի:

Դանդուղեղի կազմությունը՝ ուղեղի բունը, փոքր ուղեղը,
գանգուղեղային ներվեր Ռեղեղի բնի ֆունկցիաները: Երկայնա-
ձիգ ուղեղի նշանակությունը ներքին որգանների գործունեյու-
թյան կարգավորման մեջ: Փոքր ուղեղը և նրա ղերը:

Հասկացողություն վեգետատիվ ներվային սիստեմի մասին:
Գլխուղեղի կիսագնդերը, նրանց կառուցվածքը և նշանակու-
թյունը:

Պավլովի ուսմունքը պայմանական և վոչ պայմանական
սեֆլեքսների մասին: Զդացողության և շարժման բարձրագույն

կենտրոնները գլխուղեղի կեղեռում: Խոսքը և նրա կենտրոնները:
Գլխուղեղի կիսագնդերը, վորպես բարձր ներվային գործունեյու-
թյան որգան:

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանիվներ

1. Ներվային սիստեմի անատոմիական պրեպարատների և
նկարների ցուցադրումը (գլխուղեղի և վողնուղեղի):

2. Ներվային թելիկների մանրագիտակային պրեպարատնե-
րի ցուցադրում:

3. Ներվային թելիկների գրգուականության և հաղորդակա-
նության ցուցադրումը ներվամկանային պրեպարատների մի-
ջոցով:

4. Գորտի սեֆլեքսների հետազոտումը:

ԶԳԱՅԱԲԱՆՆԵՐ (3 ժամ)

Զգայարանները և նրանց գերը որգանիզմում:

Աչքը, նրա կառուցվածքը, ցանցաթաղանթի նշանակու-
թյունը:

Լսողության գործարանը և ձայնի ընդունումը:
Ձայն և խոսք, ձայնի առաջացումը կոկորզում:
Ճաշակելիք և հոտառություն:

Մաշկային զգացողությունների—ջերմության, շոշափելիքի և
ցավի ընդունումը: Մկանային զգացողություն:

Ցուցադրումներ յեվ գործնական աշխատանիվներ

1. Զգացողության որգանների անատոմիական պրեպարատ-
ների, մուլյաժների, նկարների ցուցադրում:

2. Աչքի հերձումը:

10. ՆԵՐԲԹԻՆ ՍԻԿՐԵՑԻՑԻ ԳԵՂՉԵՐ (4 ժամ)

Տարբեր թղիջների և հյուսվածքների քիմիական փոխազ-
գեցությունը որգանիզմում:

Ներքին սեկրեցիայի գեղձերը և նրանց առանձնահատկու-
թյունները: Հասկացողություն նորմոնների մասին:

Վահանաձև գեղձի, ուղեղային հավելվածքի, վերյերիկամնա-
յին գեղձի, յենթառուամբուային գեղձի և սեռական գեղձերի
ներքին սեկրեցիայի նշանակությունը: Գեղձերի միջև յեղած

կապի որինակները՝ Նվաճումները ներքին սեկրետայի գեղձերի ուսումնասիրության բնագավառում և նրանց պրակտիկ նշանակությունը անառապահության և բժշկության մեջ:

11. ԲԱԶՄԱՑՈՒՄ ՅԵՎ ԱՇՈՒՄ (2 Ժամ)

Սեռական որգանները: Սեռական գեղձերը և նրանց կողմից արտադրվող սեռական բջիջները: Սերմաբջիջ և ձվաբջիջ:

Բեղմնավորում և ստղմի զարգացումը: Նմանությունը տարբեր տեսակների սաղմերի կազմության և զարգացման միջև տարբերությունների աստիճանական առաջցումը: Այս փասուերի կարեռությունն եվլյուցին ուսմունքի համար: Առող որդանիքմի առանձնահատկությունները ասսմիթիացիայի պրոցեսների գերակշռումը, չափսի և կշռի ավելացումը: Սննդառությունը մանկական և պատանեկական հասակում: Մայրության և մանկության պաշտպանությունը ԽՀՀՄ-ում:

Յուցադրումներ՝ յել գործնական աշխատանքներ

(10-րդ և 11-րդ թեմաների համար)

1. Ներքին սեկրետայի գեղձերի և սեռական գեղձերի անատոմիական պրեպարատների, մուլյաժների և նկարների ցուցադրումը:

2. Եքսէկուրսիա գեպի սանլուս կամ մայրության ու մանկության թանգարան:

ՅԵՎՐԱՓԱԿՈՒՄ (1 Ժամ)

Աշխատանքն ու որգանիզմը: Տարբեր որգանների և սիստեմների մասնակցությունն աշխատանքային պրոցեսում: Ուժասպառություն և հոգնածություն: Դիտակցության գերն աշխատանքային գործունեյության մեջ: Դեպի աշխատանքը գիտակից վերաբերունք ունենալու նշանակությունը սոցիալիզմի պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

1. Պրոֆ. Բարսկի — Մարդու գիգիոլոգիան, Դասագիրք մանկ. ԲՈՒՀ-երի համար, 1937 հրատ. 1-ին և 2-րդ մաս (հայերեն թարգմ. Մանկ. Խնադանութիւն հեռակա բաժին):

2. Պրոֆ. Կաբանով — Մարդու անատոմիան, 1938 թ. հրատ.

3. Յուղմեր, Սուլվորովա և Կողիր — Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի դասավանդման մեթոդիկա, 1938 թ, հրատ.

ԲՈ.ՑՈ.ՏՐԱԳԻՒՐ (1)

Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան ուսումնասիրվում եւ մեծահասակների գպրոցի 7-րդ դասարանում:

Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի դիմուլութիւն-մատերիալիստական աշխարհայցքի մշակման և սովորողներին հասարակական ու անձնական առողջապահության (գիգիենայի) բնագավառում ունակություններով զինելու համար:

Ծրագրում արտացըլված եւ գասընթացի գիտեկտիկական—մատերիալիստական հիմունքը, բայց նրա կոնկրետացումը և իրականացումը մեծապես կախված է գասատություն, վորը մշտապես պիտք ե ի նկատի ունենա այդ առարկայի գասավանդման նպատակաձգությունը:

Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի գասընթացը հանդիսանում է մի ողակ բիոլոգիական և բնագիտական առարկաների ցեղակում. դրա համար ել անհրաժեշտ ե նշել շարադրվող նյութի կազմը բուսաբանության, կենդանաբանության, ֆիզիկայի, քիմիայի նախակինում անցած գասընթացների հետ: Այսպես որինակ, կենդանիների և մարդու ընդհանուր կազմության նմանությունն ու տարբերությունները ուսումնասիրելիս անհրաժեշտ ե սովորողներին հիշեցնել աեղեկություններ կենդանաբանությունից. Քջի կազմությունն ուսումնասիրելիս տվյալներ բուսաբանության դասընթացից, նյութերի փոխանակությունն ուսումնասիրելիս տվյալներ ֆիզիկայից և քիմիայից և այլն և իջեցնեցները կոնկրետ որինակներով ցույց կտան առանձին բիոլոգիական և բնագիտական գիտցիպիկների միջև յեղած կապն ու նրանց զարգացման փոխադարձ կախումը, ինչպես նաև կհեշտացնեն առարկայի յուրացումը Դասընթացի բաժիններից շատերում կարող են գործնական հետեւթյուններ արվել, վորոնց ճշգությունն հաստատվում է ամեջականորեն գործնականով և դիտողություններով:

Այդ հետեւթյունները, լինելով գիտության զարգացման արդյունք, ապացուցում են բիոլոգիական գիտությունների որյեկտիվ հատությունը, իդեալիստական և կրօնական թեորիաներում յեղել են փորձեր ոգտագործելու ֆիզիոլոգիական պրոցեսների մասին յեղած գիտեկիքների վոչ լրիվ լինելը և այդ պրոցեսների հակայական բարդությունը: Մասնավորապես այդ վերաբերվում

Ն կենտրոնական սերվային սիստեմի ֆիզիոլոգիային, քանի վոր, ինչպես որինակ, զանգութիքի աշխատանքը միշտ կապվում էր որդանիքմի հոգեկան, դիտակից գործունելիյան բարձր ծեփերի հետ և իդեալիստական—կրոնական պատկերացումների տեսակետից անըմբոնելի հանդիսանում։ Նման պատկերացումներին արդեն վճռական հարված և հասցվում կենտրոնական սիստեմի ֆիզիոլոգիայի բավականի խոշոր գիտելիքներով, մանավանդ ի. Պ. Պավլովի կողմից զարգացրած բարձր ներվային գործունելիյության մասին յեղած ուսմունքով։ Դասավանդելով մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան պետք և բացահայտել կրօնական պատկերացումների այն վողջ անհեթեթությունն ու վնասակարությունը, վորը հորինում ելին յեկեղեցականները մարդու որդանիքմի շուրջը:

Անհրաժեշտ ե սովորողներին ծանոթացել յեկեղեցու կողմից գիտական անատոմիայի ու ֆիզիոլոգիայի հիմնադիրների գեճ պայքարելու պատմության հետ (որինակ նշանավոր Վեպահիլի հետապընդգելը խապանական ինկվիզիցիայի կողմից, գիտնական—բժիշկ Սերգեափակ այրումը խարույկի վրաև այլն), Ծրագրի յուրաքանչյուր թեման հարուստ նյութ ե տալիս սովորողների հակակրօնական դաստիարակության համար։ Այսպես որինակ. արյան հատուկ աստվածային հատկությունների պատկերացումը բացահայտորեն հերքվում են թեկուղ այն անվիճելի տվյալներով, ըստ վորի արյան մեջ շաքարային մասի պակասումը առաջցընում ե կենտրոնական ներվային սիստեմի գործունեյության խախտումներ (ուշագնացություն, մկանային ջղաձգություն, սրտի գործունեյության վատացում և այլն) և մահ։ Ճեթե մի քանի րոպեից հետո վոչ միայն արյան, այլ նույնիսկ բերանի միջոցով ստամոքսի մեջ շաքարային լուծույթ մտցնենք սկսում ե լրիվ առողջացումը։ Այսպես, սրտի գործունեյության որինակի վրա կարելի յի ցույց տալ, վոր չկատեղ հոգու մասին կրոնական պատկերացումներին, քանի վոր մեկուսացված որգանները (որգանիզմից հանված սիրտը, աղիքները, վերջապորությունները և այլն որգանները, վորոնց արյունատար անոթների միջով ֆիզիոլոյ գիտական լուծույթի հոսանք և անցկացվում) ապրում են բավականին յերկար ժամանակ։ Կրոնական պատկերացումները շնչառության մասին և շնչառության կապը հոգու հետ («հոգին փշեց», «վերջին շունչը», վերջին շնչի հետ հոգու գուրս գալու մասին սովորութային պատկերացումներն և այլն), ջախջախիվում են ոքսիգնացման պրոցեսի

և թթվածնի գերի մասին՝ գիտական տվյալներով, արհեստական շնչառության փորձերով, շնչառության հատուկ կինարոնի առկայության մասին յեղած տվյալներով և այլն:

կենտրոնական հելլային սիստեմի ուսումնասիրությունը և ողբերքսնիրի կոռորդինացիային՝ (համաձայնեցում) որինաչափությունների պարզաբանումը ցըռում են հոգու առկայության մասին յեղած պատկերացումները։ Համոզիչ արդյունք են աալիս մարդկանց կամ կենդանիների զանգուղեղի մեջ կիսազնդերի կեղերի հեռացման փորձերը, գլխուղեղի առանձին մասերի հիվանդությունների դեպքում (որինակ ուղեղի ուսուցքների ժամանակ):

Կոնկրետ որինակներով հարկավոր և սույց տալ՝ վոր ֆիզիո-
լսգիայի հաջողությունները հակառակ են կրօնական պատկերա-
ցումներին և ամբապնդում մատերիալիստական աշխարհայցքը՝
Այդ կառակիցությամբ նպատակարժարմար և պատմել դոկտոր
Բրյուխոնենկոյի փորձերի մասին—կտրված զլիսի և ամբողջ որդա-
նիզմի կենդանացման վերաբերյալ նրա շինած գործիքի (ավ-
անուննելաբարի) արհեստական սրտի ոգնությամբ:

Մեթոդովիական տեսակետից, բացի կոհեալիստական հայացքների դեմ պայքարելուց, մարդու անսատոմիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրության ժամանակ հարկավոր են նշել մեխանիստական գուեհությունը ու անթույլատրելիությունը, վորոնց պատկանում են, որինակ, որդաննիզմի համեմատությունը մեքենայի հետ, սիրտը՝ մոտորի հետ, ներվը՝ հեծելորուարի, ներվային սիստեմը հեռախոսակայանի հետ և այնու Անհրաժեշտ են նաև խուսափել մարդու բիոլոգիկացիայից, բացահայտել մարդու բիոլոգիկացիայի դասակարգային կյությունը կապիտալիստական յիշերուներում, վորը լայնորեն ոգտագործվում է սոցիալական անհավասարությունն արդարացնելու և սոսայական ատելությունն զասախարակելու նպատակներով, («ուսայական տեսություն», «յիշերենիկան» վորպես մարդկային ցեղի սելեկցիա և այլն):

Անսատոմիայի և փիզիոլոգիայի զաւընթացի մեջ շարադրվող փառական նյութը, ինչուս նաև այն յիգրակացությունները, վորոնք բղիում են այդ նյութից, ունեն անմիջական պրակտիկ նշանակություն։ Դասընթացի լամբինների մեծ մասում զործնական նշանակություն ունեցող յիգրակացությունները բղիում են ինքնին։ Որինակ՝ նյութերի և հներգիայի փոխանակու-

թյան հողվածի շարադրումը սննդի անհրաժեշտ կազմության և նրա քանակի մասին կոնկրետ տվյալներ և տալիս: Վիտամինների մասին ուսմունքը ցույց ետալիս մի շարք հիվանդությունների, փորոնք առաջանում են սննդի մեջ որպանիզմի համար անհրաժեշտ փոքր քանակի վորոշ նյութերի պակասության կամ բացակայելու պատճառով կանխելու ուղիները:

Մարսողության ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը տալիս ե յիդրակացություններ՝ սննդի ընդունելու ժամանակ տարբեր պարզապահական պահանջների պահպանման դերի և նշանակության մասին: Ծանոթությունն արյան ֆիզիոլոգիական նշանակության հետ ցույց ե տալիս, թե ինչպես յերկար ուսումնասիրության և գիտական տվյալների կուտակման միջոցով առաջացել են այնպիսի սլրակտիկ միջոցառումներ, ինչպիսին են արյան փոխներարկումը, արյունը մասնակի կերպով ֆիզիոլոգիական լուծություններով փոխարինելու հնարավորությունը, տարբեր հնավանդությունների հանդեպ որդանիզմի պաշտպանական հատկությունների ուժեղացումը բուժիչ շիճուկների ներարկման միջոցով և այլն: Նման տեղեկություններ հանվում են շնչառության ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունից, սրաի անոթային սիսամի զործունեցության, ներքին սեկրետացիայի գեղձերի ֆունկցիաների և դասընթացի մյուս հողվածների ուսումնասիրություններից:

Միայն մորֆոլոգիային վերաբերվող վորոշ բաժիններում (բջիջ, հասկացողություն, հյուսվածքների մասին, կմախք) և անստոմիկան մատերիալը մնելուացած և շարադրվում: Բոլոր մընացած բաժիններում որդանիների կազմությունը ֆիզիոլոգիական տվյալների հետ զուգընթաց և ուսումնասիրվում:

Դասաւոյի խնդիրն ե՝ առավել ցայտուն կերպով ցույց տալ փունիցիաների ու կառուցվածքի կապը առանձին որդանների և սիսամիների մեջ:

Դասընթացի առանձին մասերը շարադրելիս, ցանկալի յեմիշտ ցույց տալ և (նյութը մեծացնելու հետ միաժամանակ) խորացնել պատկերացումը որդանիզմում գոյություն ունեցող փոխադրձ այն կապի մասին, զոր իրազործվում և հումորալ և ներվային ուղիներով:

Ծրագրում հաշվի յեն առնված վերելում շարադրված մումենտները: Նյութը բաժանված է 11 թեմաների, վորոնց հետեւ վորականությունը սահմանված է ըստ անցման տրամաբանության աստիճանի:

Առանձին ցուցմունքները թեմաների մասին հետեւյալներըն են:

Նախաբանը շարադրելիս, հարկավոր և նշել հետազոտության տեխնիկայի զարդացման և անատոմիական ու ֆիզիոլոգիական գիտելիքների զարդացման միջև յեղած կապը: Այսպես, անատոմիան մեծ նվաճումների յե հասել միկրոսկոպի գյուտի կապակցությամբ, վորը հնարավոր դարձեց ավելի անրակրնիտ գիտել որդանիզմի կառուցվածքը, քան այդ հնարավոր եր անել հասարակ աչքով: Ֆիզիոլոգիական գիտելիքների աճը իր հերթին կախված եր ֆիզիկայից և քիմիայից փոխանցված հետազոտության բազմազան յնդանախների գործադրումից (եներգիայի ծախսման ճշգրիտ յեղանակներ, եւեկարական հոսանքի գործազրումը ներվի և մկանների զբուման համար: Սրյան կազմությունը քիմիական ուսումնասիրությունը, վորը թույլ տվեց հայտնաբերել ֆիզիոլոգիայի լուծությներ և այլն):

Այդ թվում մեծ նշանակություն ունեցավ հասկապես ֆիզիոլոգիական հետազոտության յեղանակների զարդացումը, վորի սկզբը զբեց չարվելը, հայտնաբերելով արյան շրջանառությունը: Ֆիզիոլոգիական գիտության խոշոր ներկայացուցիչներից անհրաժեշտ և նշել Սեչնովիին և վերջերս մահացած Ի. Պ. Պավլովին: Նրանց գործունեցության որինակով տեղին և ցույց տար վորմարդու ֆիզիոլոգիայի ուսումնասիրության գործում շատ կողմերով վորպես հիմք են ծառայել կենդանիների վրա կստարած փորձերը: Այդ հետազոտությունները ցույց տվին մարդու որդանիզմում կատարվող պրոցեսների (արյան շրջանառություն, մաքսություն, շնչառություն, նյութերի փոխանակություն, ներվային սիսամի հիմնական պրոցեսները և այլն) հսկայական համեմնությունը մարդու մարդու մարմնում կատարելով պրոցեսներին: Այս տեղից ել կարելու և կենդանիների ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունը: Կենդանիների վրա կատարած փորձերի յեզրակացությունները անպայման ստուգվում են մարդկանց վրա, քանի վոր չնայած նմանության տոկայությանը, մարդու մոտ ֆիզիոլոգիական պրոցեսները ատարերկվում են կենդանիների մոտ կատարվող ֆիզիոլոգիական պրոցեսներից:

Այդ տարբերությունների առաջացումը պայմանավորող պատճառը հանդիսանում է աշխատանքը— գիտակից և վորոնց նպատակի ուղղած զործունեցությունը, վորը հատուկ և միայն մարդուն:

Ծրագրի 2-րդ թեման—վոսկրամկանային սիստեմը որպահանակերի սիստեմի ուսումնասիրության որինակն և հանդիսանում։ Մեթոդական տեսակետից ամբողջովին տեղին կլինի կմախքի ուսումնասիրությունը լրացնել վոսկրի ածխացմանը (նրա անորդանական բաղադրությունը) և կրանյութից ազատված (նրա որդանական բաղադրությունը) վոսկրի ցուցադրումով և վոսկրի մեխանիկական դիմաց կունությունը ցույց տվող փորձերի կատարումով։ Պետք է ցույց տալ վոսկրի նշանակությունը, վորովես կմախքի և մկանունքի պահպանման ապարատի ու նշել վոսկրների պաշտպանական դերը, որինակ՝ գանգի վոսկրների (գլխուղեղի պաշտպանությունը)։

Մեթոդական տեսակետից կարող է դժվար լինել կմախքի մկանունքի անատոմիայից լայնակի շելտավոր մկանների ֆիզիոլոգիային անցնելը։

Առավել հարժար յեղանակ է գորտի վոտի մկանների կըծկման ցուցադրումը, մեխանիկական, քիմիական (որինակ NaCl բյուրեղով) և ելեկտրական զրգությի ազդեցությամբ։

Յերրորդ թեմայում «Արյուն» և արյան շրջանառությունը հողվածը ուսումնասիրելիս հաղիվ թե հանդիպեն մեթոդական գժվարություններ։

Զորրորդ—«Ընչառություն» թեմայում զարգացվում են նախորդ թեմայի գորոշ զրույթները։ Ընչառության որդանների և սրտաանոթային սիստեմի անատոմիական կապի մասին կվիճակի խոսել արյան փոքր շրջանառությունը շարադրելիս։ Ֆիզիուրգիական կապը բղիւում և թթվածնի և ածխաթթվի փոխադրման մեջ արյան նշանակությունը շարադրելիս։ Յեղած տեղեկությունների հիման վրա շարադրվում և վերին նշառության ուղիների և թոքերի անատոմիան։ Այս նյութը խորացվում և արտաշնչման և ներշնչման մեխանիզմի մասին յեղած հիմնական պատկերացումներով։ Թոքերում կատարվող զարափոխանակումը շարադրելուց առաջ պետք է նախորդք հասկացողություն տալ թոքերի կենսական աւարտության և հանդատի ու աշխատանքի ժամանակ կատարաբող շնչառական ծավալի փոփոխությունների մասին։ Վերջացնելով թեման հեշտ և անել մի շարք պրակտիկ յեղակացություններ ողի փոփոխության նշանակության մասին (հատկապես CO₂, CO գազերի կուտակման վատ հետեանքների մասին, վորոնք իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ CO (որինակ, լուսատու գաղ, շախտային, հանքահորերի գազեր և այլն)։

Վրակտիկ նշանակություն ունի ածխածին ոքսիգով թուակագործելու հարավորությունը, վորը հետզգործինի հետ միասին առաջացնում է չափազանց կայուն միացություն, և արդեւ հանդիսանում թթվածնի փոխադրմանը, վորի հետևանքով հաճախ լինում ե մանվան գեղգեր (խեղում)։

Ընչառության որդանների վրա մարտական թուակագործյութերի ներդործության հարցը պետք է շարադրվի CO-ով թուակագործելու շարադրանքի շարունակությունը։ Հստ վորում պետք է ցույց տալ, վոր մի քանի գազեր արգելափակում են թթվածնքանելներն որգանիզմի մեջ, քայլայելով բրոնխների լորձաթաղանթը ու արվեստների հպիթելը վորը առաջացնում և շնչահեղձություն (խեղուղեղի գազեր)։

Հիմնական պատկերացումները հեշտ և զարգացնել քլորով թուակագործելու որինակով, քանի վոր կյանքում քլորի ներգործությանը հաճախակի յենք հանդիպում։

Հիմնգերորդ—«Ընունդ և մարսողություն» թեման անմիականորեն չի բղիւում անցած նախորդ նյութից, բայց հեշտ և շում նրա հետ այն անվիճելի փաստով, վոր որդանիզմի համար թթվածնից բացի անհրաժեշտ և նաև մյուս նյութերը (ջուրը և աննդանյութերը)։

Պրակտիկ յեղակացությունները բղիւում են հենց նյութից։ Այդպիսիներին պետք է գասել անհրաժեշտ ուշադրությունը մաքրությանը, ճիճուներով վարակվելու հնարավորության կապակցությամբ, ցուցմունքները կերակրի ընդունման պայմանների ազդեցության վրա (մարսողության հյութերի պակասելու հնարավորությունը, վորը վատացնում և մարսողությունը և աննդի յուրացումը)։

6-րդ և 7-րդ—«Նյութերի և եներգիայի փոխանակությունը» և «Արտաթրությունը» թեմաները տրամաբանորեն բղիւում են դասընթացից անցած նախորդ թեմանների մատերիալից և հաղորդ թե գժվարություններ ներկայացնեն։

6-րդ թեման շարադրելիս պետք է մանրամասնորեն վերլուծել կերի ացիքնի և սննդի կազմության հարցը, ցույց տառ վիտամինների վերաբերյալ յեղած գիտության պրակտիկ նվաճումները։



Թ 503

ԳԺ



ՀՀ Ազգային գրադարան



NL0226274

52. 216